ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ուսումնամեթոդական ուղեցույց

Դասընթացի մշակում և կառավարում

Ուսումնամեթոդական ուղեցույց բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների համար

Երևան
Հեղինակային հրատարակություն
2010

ՀՏԴ378:377
ԳՄԴ74.58+74.57
Դ216

Ուղեցույցը հրատարակվել է ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային հարցերով բյուրոյի ֆինանսական աջակցությամբ Շրջանավարտների նախաձեռնությունների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը ղեկավարվում է Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների կողմից (ACTR/ACCELS): Ուղեցույցում տեղ գտած գաղափարները պատկանում են հեղինակներին և հնարավոր է ամբողջությամբ չարտացոլեն ԱՄՆ Պետքարտուղարության և Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ միջազգային կրթական կազմակերպության տեսակետները:

Հեղինակներ՝

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՆՏՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԻԼԻԹ
ՔԱՐԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Խորհրդատու՝

ԶԱԼԻՆՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ԱՆՏՈՆՅԱՆ ԼՈՒԻԶԱ

Խմբագիր՝

ՄԻՍԿԱՐՅԱՆ ՍՈՆԱ

Ձևավորող՝

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԴԱ6 Դասընթացի մշակում և կառավարում:
Ուսումնամեթոդական ուղեցույց (հեղ.՝ Ա.Օհանյան, Ք.Անտոնյան, Ն.Խաչատրյան և ուրիշ:
Խմբ.՝ Ս.Միսկարյան-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2010.-96 էջ:

Սույն ուղեցույցը իր տեսակի մեջ եզակի է այնքանով, որ ունի կրկնակի գործառույթ. այն և՛ արդյունք է, և՛ ելակետ: Իբրև արդյունք այն ներկայացնում է «Դասընթացի մշակում և կառավարում» ծրագիրը, իբրև ելակետ՝ ուղղված է դասավանդողների գաղափարախոսական փոփոխությանը: Այն հասցեագրված է բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ոլորտում դասավանդողներին՝ դասավանդումն ավելի արդյունավետ կազմակերպելու և կրթական արդյունքներին առավելագույնս հասնելու համար:

Ձեռնարկում դասավանդումը, մեկնաբանվելով իբրև կառավարում, ներկայացված է իր հիմնական գործառույթներով՝ պլանավորման, կազմակերպման, մոտիվացման և վերահսկողության: Նպատակները ճշգրիտ սահմանելու կարողության ձևավորումը և ուսանողակենտրոն դասընթացի կառավարման կարևոր կողմերը բացահայտելը այս ուղեցույցի խնդիրներից է: Ուղեցույցի օգնությամբ դասավանդողները կարող են թե իրենց և թե ուսանողներին տեսնել բլոգերի դերում, իսկ բլոգ ձևավորելը դարձնել դասավանդման արդյունավետ մեթոդ:

Միով բանիվ՝ ձեռնարկը նպատակ ունի զարգացնելու, կատարելագործելու դասավանդողների մասնագիտական հմտությունները, նպաստելու դասավանդման, մասնավորապես դասընթացի մշակման և կառավարման գործընթացներում օգտակար մեթոդների ստեղծմանն ու կիրառմանը:

ՀՏԴ378:377
ԳՄԴ74.58+74.57

ISBN 978-99941-854-3-2

Բովանդակություն

1 Դասավանդում, թե՞ կառավարում էջ 9

2 Նպատակներ և կրթական էլքային արդյունքներ էջ 19

3 Դասավանդման մեթոդներ էջ 29

4 Հետադարձ կապի ապահովում և գնահատում էջ 69

5 Հավելվածներ էջ 85

Նախաբան

Սույն ուղեցույցը նախատեսված է Հայաստանի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների համար, որը ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային գործերի բաժնի «Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ» **(ACTR/ACCELS)** միջազգային կրթական կազմակերպության «Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագրի շրջանավարտների դրամաշնորհ» նախագծի (Junior Faculty Development Program Alumni Grant) շրջանակներում իրականացված «Դասընթացի մշակում և կառավարում» ծրագրի արդյունքն է:

«Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագիրը» (Junior Faculty Development Program, JFDP) «Ամերիկյան խորհուրդներ»-ի կողմից իրականացվող ամենամյա ծրագիր է: Նպատակն է՝ Հայաստանի բուհերի դասախոսներին հնարավորություն ընձեռել վերապատրաստվելու հումանիտար և հասարակական գիտությունների ասպարեզում՝ ԱՄՆ-ի որևէ բուհում աշխատելով որպես գիտայցելու (գարնանային կիսամյակի ընթացքում): Ծրագրի մասնակիցները ստանում են ակադեմիական արդիական նյութեր ձեռք բերելու, առարկայական նոր ծրագրեր մշակելու, դասավանդման նոր մեթոդներ ուսումնասիրելու, իրենց երկրի կրթական համակարգը և մշակույթը ԱՄՆ-ում ներկայացնելու, իսկ վերջնարդյունքում՝ ԱՄՆ-ի և Հայաստանի համալսարանների միջև երկարատև համագործակցություն հաստատելու հնարավորություններ:

2010 թ. «Ամերիկյան խորհուրդներ»-ը մեկնարկեց «Երիտասարդ դասախոսների վարգացման ծրագրի շրջանավարտների դրամաշնորհ» (Junior Faculty Development Program Alumni Grant, JAG) նոր նախագիծը, որի նպատակն էր ԱՄՆ-ում վերապատրաստված երիտասարդ դասախոսներին միավորել ընդհանուր գաղափարի և գործի շուրջ: Արդյունքում՝ 2010թ. ամռանը միավորվեցին JFDP-ի տարբեր տարիների շրջանավարտներ և համատեղ մեկնարկեցին «Դասընթացի մշակում և կառավարում» նախագծի իրագործումը:

Նախագծի *նպատակն է*՝ խթանել մասնագիտական կրթական հաստատություններում դասավանդողների մանկավարժական գիտելիքների և հմտությունների վարգացումը՝ նպաստելով Հայաստանում կայացող կրթական վերափոխումների գործընթացին: Այդ նպատակի իրագործման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ *խնդիրները.*

- **ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հայախոս դասավանդողների համար նախատեսված մեթոդա-կան ուղեցույցի հրատարակումը և տարածումը:**

  Հայաստանյան հետդպրոցական կրթական տիրույթում սույն մեթոդական ուղեցույցի արդիականությունը պայմանավորված է մի կողմից գլոբալ փոփոխություններով և կրթական համակարգում դրանցից բխող նոր պահանջներով, մյուս կողմից՝ Բոլոնիայի գործընթացին անդամակցելու արդյունքում մեր երկրի կրթական համակարգում իրագործվող վերափոխումներով: Մշակված նյութը հագեցած է

առկա խնդիրների շուրջ տեսական հիմնավորումներով, մեր երկրի կրթական համակարգին համապատասխան գործնական առաջարկություններով, այլ երկրների փորձի ներկայացմամբ:

- **Նախագծի շարունակականությունն ապահովելու նպատակով նրա հնարավոր բոլոր շահառուների՝ դասախոսների, հետազոտողների, պետական և մասնավոր ոլորտների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար միասնական հարթակի ձևավորում՝ www.teaching.am էլեկտրոնային կայքի միջոցով:**

  էլեկտրոնային կայքը նպատակ ունի միավորելու հայախոս բոլոր շահագրգիռ կողմերին ինչպես Հայաստանից, այնպես էլ աշխարհի տարբեր ծայրերից: Ըստ այդմ՝ ստեղծված կայքը բաղկացած է երկու մասից՝ «Ռեսուրս-կենտրոն» և «Սոցիալական ցանց» բաժնից: **Ռեսուրս-կենտրոնում** վետեղված են դասընթացի մշակման և կառավարման հիմնախնդիրների շուրջ հայերեն լեզվով տեղեկատվություն, դասընթացի ծրագրերի օրինակելի նմուշներ, իրական օրինակներ, հայկական ակադեմիական տարբեր ոլորտներում առկա նորություններ: **Սոցիալական ցանցը** այն հարթակն է, որտեղ հանդիպում են հիմնախնդրին առնչվող բոլոր շահառուները, կիսում իրենց կարծիքները, մտավախությունները, փորձը, ստանում իրենց համար հետաքրքրական նորություններ: Այսպես, օրինակ, կայքի սոցիալական ցանցում դասավանդողները կարող են ներկայացնել իրենց գիտական հետաքրքրությունները, դասավանդվող առարկաները, տեղադրել առարկայական ծրագրեր, հրատարակված հոդվածներ, հեղինակային այլ նյութեր: Նրանք կարող են հաղորդակցվել այլ հաստատությունների, մարզերի, երկրների իրենց գործընկերների հետ, ինչպես նաև առաջարկներ ներկայացնել կամ ստանալ այլ շահառուներից (օրինակ՝ մասնավոր ոլորտի ներկայացուցիչներից կամ հետազոտողներից): Այս ամենի ընթացքում նրանք ձեռք են բերում նոր կապեր, որոնք կարող են հետագայում հիմք դառնալ ակադեմիական ոլորտում նոր համագործակցային նախագծեր իրականացնելու համար:

- **Նախագծի շարունակականության ապահովում՝ ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, հետազոտական կենտրոններում և այլ շահագրգիռ կառույցներում հիմնախնդրի շուրջ քննարկումների, կլոր սեղանների, բանավեճերի իրագործման միջոցով:**

Նախագիծն իրականացնող թիմի անդամներն են.

Արևիկ Օհանյան. JFDP 2010 թ. շրջանավարտ, նախագծի ղեկավար:

Դասավանդում է Եվրասիա միջազգային համալսարանի Կառավարման ամբիոնում, ղեկավարում է բուհի Որակի ապահովման կենտրոնը: Գործարար կառավարման մագիստրոս է:

2010 թ. գարնանային ուսումնական կիսամյակի ընթացքում կրթության կառավարման ոլորտում վերապատրաստվել է Բոստոն քոլեջի Միջազգային բարձրագույն կրթության կենտրոնում:

Նա խորապես համոզված է, որ կրթության նվիրյալների, փոփոխության գործակալների նպատակային աշխատանքի արդյունքում են հնարավոր կրթական համակարգի արմատական բարեփոխումներ:

Քրիստինե Անտոնյան. JFDP 2010 թ. շրջանավարտ, նախագծի կայքէջի ստեղծման պատասխանատու:

Դասավանդում է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի Կառավարման ամբիոնում, ղեկավարում է ֆակուլտետի Հետազոտության և բիզնես կենտրոնը: Տնտեսագիտության թեկնածու է:

2010 թ. գարնանային կիսամյակի ընթացքում վերապատրաստվել է Կալիֆորնիայի պետական համալսարանի (Ֆրեզնոյի) Կենտրոնական Կալիֆորնիայի կրթության և տնտեսական Հետազոտությունների կենտրոնում (CERECC) և CRAIG բիզնես դպրոցում:

Համոզված է, որ կրթական համակարգը փոխազդուն գործընթաց է: Ըստ այդմ՝ այն պետք է ապահովի տարբեր ընդունակություններ և հնարավորություններ ունեցող անհատների ոչ միայն լավ կրթություն ստանալը, այլև իրավասու մասնակցությունն արդի կյանքին:

Նարինե Խաչատրյան. JFDP 2010 թ. շրջանավարտ, ուղեցույցի աշխատանքային խմբի ղեկավար:

Դասավանդում է Երևանի պետական համալսարանի Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի Անձի հոգեբանության ամբիոնում: Հոգեբանական գիտությունների թեկնածու է, դոցենտ:

2010 թ. գարնանային ուսումնական կիսամյակը անց է կացրել Կանկասի համալսարանի Հոգեբանության ամբիոնում:

Նրա համոզմունքն է. «Կրթությունը ենթադրում է ոչ միայն գիտելիքի յուրացում, այլև աշխարհայացքի ձևավորում: Իսկ դասախոսն այն միջնորդն է, որն ուղղորդում և աջակցում է աշխարհաճանաչման և ինքնաճանաչման գործընթացում»:

Լիլիթ Կարապետյան. JFDP 2010 թ. շրջանավարտ, նախագծի հասարակայնության հետ կապերի պատասխանատու:

Դասավանդում է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Հատուկ մանկավարժության ամբիոնում:

2010թ. գարնանային ուսումնական կիսամյակում վերապատրաստվել է Թաուսոնի համալսարանի հոգեբանության ֆակուլտետում:

Կարծում է, որ յուրաքանչյուր ոք արժանի է այնպիսի ապագայի, ինչպիսին ինքն է ցանկանում. «Դարձնենք մեր երկրի կրթությունը հասանելի բոլոր նրանց համար, ովքեր իրենց ապագան տեսնում են կրթության լույսի ներքո, նաև արդյունավետ նրանց համար, ովքեր ցանկանում են այն կիրառել սեփական և հասարակության վարգացման համար»:

Լուսինե Քարամյան. JFDP 2008թ. շրջանավարտ, մարզային թրեյնինգների անցկացման պատասխանատու:

Դասավանդում է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի Ֆակուլտետում, Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնում:

2008թ. գարնանային ուսումնական կիսամյակում վերապատրաստվել է Նյու Ջերսիի Ռատգերս պետական համալսարանում:

Առաջնորդվում է այն կարգախոսով, որ դասավանդումը ուղղակի գիտելիքի փոխանցում չէ, այլ դրական փոփոխությունների խթանում և իրագործում:

Տիգրան Մանուկյան. JFDP 2010 թ. շրջանավարտ, նախագծի շրջանակներում միջոցառումների կազմակերպման պատասխանատու:

Դասավանդում է Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի Ճարտարապետական նախագծում և ճարտարապետական միջավայրի դիզայն ամբիոնում: Ճարտարապետության թեկնածու է, դոցենտ:

2010թ. գարնանային ուսումնական կիսամյակում վերապատրաստվել է Օկլահոմայի պետական համալսարանի Donald W. Reynolds Ճարտարապետական դպրոցում:

Կարևորում և առաջնորդվում է այն հիմնարար համոզմամբ, ըստ որի գիտության նվաճումները փոխպայմանավորվում և փոխլրացվում են ուսումնակրթական ծրագրերի շարունակական կատարելագործմամբ:

1

Դասավանդում, թե՞ կառավարում

Դասավանդումն ու կառավարումը՝ որպես հավասարակշիռ հասկացություններ

«

Միջակ դասավանդողն ասում է:
Լավ դասավանդողը բացատրում է:
Գերազանց դասավանդողը ցուցադրում է:
Բացառիկ դասավանդողը ՈԳԵՇՆՉՈՒՄ է:

Ուիլիամ Արթուր Ուարդ

Դասավանդողի կերպարի առանձնահատկությունն ուրվագծվում է մասնագիտության, փորձառության, արժեքային համակարգի, առաքելության և նպատակների ինքնատիպությամբ: Միևնույն ժամանակ, ուսուցման ընթացքում դասավանդողներն իրականացնում են ընդհանուր տիպի գործառույթներ (դասավանդում, գնահատում, ընթացիկ ստուգումներ և այլն)՝ անկախ դասախոսների անհատական առանձնահատկություններից: Ընդհանուր առմամբ, այդ գործառույթները համընկնում են կառավարման հիմնական գործառույթներին, այդ թվում՝ պլանավորման, կազմակերպման, մոտիվացման, վերահսկողության: Սակայն ուսուցման գործընթացում կառավարման որոշ գործառույթներ (օրինակ՝ մոտիվացման, հստակ պլանավորման) երբեմն անտեսվում են կամ հետին պլան մղվում:

Դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է հավասարակշռել նշված գործառույթների իրականացումը՝ միայն որոշ գործառույթներով սահմանափակվելու փոխարեն:

Պլանավորում

Ուսումնական տարվա սկզբին բոլոր դասավանդողներն իրականացնում են պլանավորման գործառույթ, սակայն երբեմն թերի է մնում այն վերափոխելու, կատարելագործելու աշխատանքը: Պլանավորման հիմքում պետք է ընկած լինեն օբյեկտիվ կանխատեսումներ՝ ժամանակի պահանջներին համապատասխան: Այդ պարագայում պլանավորումը դառնում է առավել բարդ և ընդգրկուն գործառույթ, որը կարելի է բնորոշել որպես ռազմավարական պլանավորում:

Ռակմավարական պլանավորման և կառավարման գերնպատակը մրցակցային առավելությունների ապահովումն է հարափոփոխ արտաքին և ներքին գործոնների ազդեցության ներքո: Այս դեպքում, ենթադրում ենք, որ մրցակցային առավելություններ պետք է ապահովել յուրաքանչյուր ուսանողի համար՝ նախապես գնահատելով վերջիններիս ուժեղ և թույլ կողմերն ու կանխատեսելով աշխատանքային շուկայի հնարավորություններն ու հավանական վտանգները:

Կազմակերպում

Պարտականությունների, լիազորությունների և ընդհանուր պատասխանատվության շրջանակների, անհրաժեշտ ռեսուրսների (սարքավորումներ, գրականություն, համացանց և այլն), ինչ-պես նաև ակնկալիքների հստակեցումը տարեսկզբին ամուր հիմք են ստեղծում տարվա ընթացքում իրականացվող կազմակերպչական աշխատանքների համար: Տարվա սկզբին մի՛ խուսափեք անհրաժեշտ ժամանակ տրամադրելուց և ընթացիկ աշխատանքային կանոնները, հանձնարարություններն ու գնահատման համակարգի առանձնահատկությունները մանրամասն քննարկելուց: Ուսանողակենտրոն մեթոդների կիրառման դեպքում դասավանդումը կարելի է առավելապես բնութագրել որպես ուսումնառության (ուսանողի սովորելու) ընթացքի կազմակերպում:

Մոտիվացում

Մոտիվացումն անհրաժեշտ է ուսումնառության ընթացքն անընդհատ բարելավելու, հետաքրքիր և անմոռանալի դարձնելու համար: Մոտիվացման արդյունավետ մեթոդներ կիրառելու համար նախ պետք է փորձել ճանաչել ուսանողին, ստեղծել փոխադարձ հարգանքի վրա հիմնված ջերմ փոխհարաբերություններ: Ուսանողները (կամ ուսանողների որոշ խմբեր) ունեն մոտիվացիայի տարբեր աղբյուրներ և որպես դասավանդող կամ այս պարագայում՝ կառավարող՝ պետք է կարողանաք արձագանքել և ստեղծել յուրահատուկ մի միջավայր, ուր բոլորը, այդ թվում և մենք, կլինեք մոտիվացված՝ առավելագույնս իրականացնելու նախանշված նպատակները: Ընդգծենք, որ ուսանողի՝ բարձրագույն կրթություն ստանալու ճանապարհը մեծապես համընկնում է նրա հարգանքի և ինքնարտահայտման պահանջների իրականացման հետ:

Վերահսկողություն

Որոշ դասավանդողներ վերահսկողության գործառույթն իրականացնում են միայն վերջին՝ գնահատման փուլում, ինչը չի կարող հանգեցնել աշխատանքի արդյունքների անընդհատ բարելավմանը: Կառավարման մեջ, եզրափակիչ վերահսկողությունից զատ, տարբերում են նաև նախնական և ընթացիկ վերահսկողություն հասկացությունները: Գնահատումը դիտարկելով որպես ուսուցման և ուսումնառության ընթացքի վերահսկողության միջոց՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հասկացությունները.

- Նախնական գնահատում. դասընթացի սկզբում վեր են հանվում ուսանողների բազային գիտելիքներն ու հմտությունները:

- Ընթացիկ գնահատում. դասավանդողը գնահատում է ուսանողի ընթացիկ առաջադրանքները՝ հետադարձ կապի ապահովման միջոցով նպաստելով աշխատանքի առավել արդյունավետ իրականացմանը: Ընթացիկ գնահատումը թույլ է տալիս ժամանակին հստակեցնել ակնկալիքները, ինչը ուսուցողական բնույթ է կրում:

- Եզրափակիչ գնահատում. ոչ միայն ամփոփում է ուսանողների տվյալ ուսումնական տարվա աշխատանքի արդյունքները, այլև հիմք է հանդիսանում գալիք տարվա աշխատանքները առավել արդյունավետ պլանավորելու համար:

Նշված գործառույթների իրականացումն առավել դյուրին կլինի, եթե ուսանողները հստակ գիտակցեն իրենց դերը ողջ գործընթացի շրջանակներում: Այս նպատակով անհրաժեշտ է կազմված դասընթացի ծրագիրը ՆԱԽԱՊԵՍ ՏՐԱՄԱԴՐԵԼ ՈՒՍԱՆՈՂԻՆ և առաջին հանդիպման ժամանակ մանրակրկիտ ներկայացնել ծրագրում ներգրավված յուրաքանչյուր կետ: Հավելված 5-ում տեղ գտած դասընթացի ծրագրի առաջարկվող ձևաթերթը ներառում է այն կետերը, որոնց նախապես ծանոթ լինելով՝ ուսանողը կկարողանա արդյունավետ պլանավորել և օգտագործել իր ժամանակն ու եռանդը:

Դասավանդողի ո՞ր տիպի/տիպերի հետ եք Ձեվ նույնականացնում:

- **Տեղեկատվության փոխանցող**
- **Ուղղորդող**
- **Դասընթացը կառավարող**
- **Ստրատեգ, ռազմավարական կառավարող**
- **Առաջնորդ, խարիզմատիկ իշխանության**
- **Կրող, ոգեշնչող**



Նկար 1. *Կառավարման հիմնական գործառույթները*

Ժամանակակից կրթության արդիականացումը

Արդի հասարակության մեջ ներկայումս ընթացող քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունները մեծ ազդեցություն են ունենում բարձրագույն և միջին մասնագիտական կրթության վրա: Կրթական համակարգի անընդհատ կատարելագործման նախադրյալներից մեկը հասարակական մարտահրավերներին և համաշխարհային վարգացումներին ժամանակին արձագանքելն է:

Հասարակության վարգացման ժամանակակից միտումների ազդեցությունը կրթական համակարգի վրա կարելի է բնութագրել որպես հետարդյունաբերական անցումային գործընթաց, որի արդյունքում էլ մեծացել է տեղեկատվության՝ որպես գլխավոր ռեսուրսի դերը: Արդյունքում շահում են այն երկրները, որտեղ նոր տեղեկատվությունը ստացվում է առավել արագորեն, մշակվում՝ վերածվելով գիտելիքի, և փոխանցվում թիրախային հասցեատիրոջը: Հետևաբար, հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ունենալ մի կողմից տեղեկատվական վարգացած ենթակառույցներ, ինչպիսիք են բարձր տեխնոլոգիական համակարգերը և դրանք օգտագործելու հնարավորությունները, մյուս կողմից՝ կրթական և գիտական այնպիսի բարենպաստ միջավայր, որտեղ առկա տեղեկատվությունը կվերածվի անհրաժեշտ գիտելիքի: Ըստ էության՝ ուսումնական հաստատությունները անընդհատ բախվում են նոր հիմնախնդիրների, որոնց լուծումը ենթադրում է ուսանողին սոսկ գիտելիք փոխանցող հաստատության վերափոխումը ուսանողի հետ միասին գիտելիք ձևավորող հաստատության: Այսինքն՝ ժամանակակից մասնագիտական ուսումնական հաստատությունները (համալսարանները, ինստիտուտները, ակադեմիաները, քոլեջները) ուսանողների համար այլևս չեն կարող վուտ ֆիզիկական ներկայության վայր լինել: Դրանք առավելապես դառնում են միջանձնային գիտակրթական փոխազդեցությունների միջավայր:

Ստորև բացահայտենք հասարակական արդի վարգացումների որոշ դրսևորումներ և քննարկենք դրանց ազդեցությունը բարձրագույն կրթական համակարգի վրա:

Գլոբալացում (համաշխարհայնացում)

Գլոբալացումը հետարդյունաբերական հասարակությանը բնորոշ առանցքային գործընթացներից է: Այն դրսևորվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Գլոբալացման հետևանքով մասնագիտական կրթության ոլորտում առաջացել են մի շարք խնդիրներ:

- Մասնագիտական կրթությունն այլևս չի ճանաչում սահմաններ. ուսանողները կարող են մասնակցել դասընթացներին աշխարհի ցանկացած կետից՝ առցանց, ինչպես նաև ապատ տեղաշարժվել երկրից երկիր՝ կրթություն ստանալու նպատակով:
- Գլոբալացված աշխարհում մեծանում է բազմաձև և տարաբնույթ կրթական հաստատությունների թիվը, դրանց հասանելիության աստիճանը և, հետևաբար, մեծ դեր է խաղում մրցակցության գործոնը. ուսանողները հնարավորություն ունեն ընտրելու տարբեր համալսարաններ և ուսուցման տարբեր ձևեր:

Մասնագիտական կրթության հասանելիությունը

Արդի կրթական համակարգում ձևավորվում են բազմաթիվ ու տարաբնույթ կրթական ծրագրեր և մեծ պահանջարկ ունեցող նոր մասնագիտություններ: Անընդհատ զարգացող համաշխարհային շուկայական տնտեսության պայմաններում շարունակաբար իրենց մրցակցային առավելությունն են հաստատում հին ու նոր կրթական հաստատությունները: Ժամանակակից կրթությունը դառնում է հասանելի ցանկացած տիպի կրթություն նախընտրող մարդու համար՝ անկախ տարիքից, սոցիալական վիճակից և այլ պայմանականություններից: Հաջողություն արձանագրող երկրներում կրթական հաստատությունները շարունակաբար բարելավում են իրենց կրթական ծրագրերը, հարմարեցնում դրանք սովորողների տարբեր պահանջներին: Վերջին տարիների ընթացքում մեր հանրապետության բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների կողմից նույնպես մշակվել են մեթոդական տարբեր հիմքերով վանական կրթական ծրագրեր՝ առկա, հեռակա, երկարաժամկետ կամ կարճաժամկետ, նեղ մասնագիտական կամ միջառարկայական և այլն, որոնցում հաշվի են առնվում ուսանողների պահանջները:

Մասնագետի որակական չափանիշները

Գլոբալացված շուկայական տնտեսության պայմաններում առավել կարևորվում են աշխատանքային շուկայի կողմից մասնագետին ներկայացվող որակավորման պահանջները: Այսօր երիտասարդ շրջանավարտները, տեսական մասնագիտական գիտելիքներից զատ, պետք է ունենան հետազոտական և գործնական հմտություններ, լինեն նոր գաղափարներ առաջարկողներ և թիմակիցների գաղափարները զարգացնողներ, լինեն նախաձեռնող, գրագետ, տիրապետեն աշխատանքային էթիկայի կանոններին, ունենան թիմում աշխատելու կարողություններ, քննադատական, վերլուծական, հետազոտական, ստեղծագործական մտածողություն և այլն:

Այս ամենը նոր լուծումներ է պահանջում մասնագիտական կրթության կազմակերպման ոլորտում՝ համապատասխան հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով:

Բարձր տեխնոլոգիաներ

Ժամանակակից կրթության ոլորտը պահանջում է տեխնիկական միջոցների և բարձր տեխնոլոգիաների համակողմանի ներթափանցում: Այդ գործընթացը մի կողմից ուղղված է դրանք կիրառելու համար ուսանողին անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով վինելուն, մյուս կողմից՝ կրթական գործընթացի համապատասխանեցմանը արդի պահանջներին և ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Վերջին հաշվով՝ վերափոխվում են ուսուցման գործընթացի կառավարման բոլոր գործառույթները՝ դասընթացը պլանավորելու, լսարանում ճիշտ կազմակերպելու, ուսուցման նոր ձևեր և ոճեր ընտրելու, ուսանողներին մոտիվացնելու և վերահսկելու, նոր մեթոդաբանությամբ առաջադրանքներ կազմելու և հանձնարարելու, իրականացնելու և ներկայացնելու առումներով: Որպես այս ամենի հետևանք՝ դասախոս-ուսանող փոխհարաբերությունները ընդունում են որակապես նոր ձևեր, բովանդակային նոր դրսևորումներ՝ նպաստելով ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Անշուշտ, նոր որակի կրթություն ապահովելու համար ուսումնական հաստատությունները ստիպված են լրացուցիչ ֆինանսական ներդրումներ կատարել՝ որակապես նոր ենթակառուցվածքներ ստեղծելով:

Միասնական կրթական տարածք

Հայտնի է, որ ՀՀ կրթական ոլորտը վերջին տարիներին գտնվում է անընդհատ վերափոխումների ընթացքում՝ պայմանավորված մեր երկրի անդամակցությամբ Բոլոնիայի գործընթացին, որի նպատակն է ստեղծել այնպիսի միասնական կրթական և գիտական տարածք, որտեղ բոլոր մասնակից երկրների ուսումնական հատատությունների կողմից ապահովվող կրթությունը լինի համադրելի և գնահատվի համընդունված չափանիշներով՝ կրեդիտներով: Մասնակից երկրի ցանկացած ուսումնական հաստատության շրջանավարտ պետք է կարողանա տեղափոխվել այլ ուսումնական հաստատություն՝ կրթությունը շարունակելու նպատակով, կամ աշխատանք գտնել եվրոպական ընդհանուր աշխատանքային շուկայում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շարունակաբար բարելավել կրթական ծրագրերը և համապատասխանեցնել եվրոպական աշխատանքային շուկային՝ որակյալ կրթություն ապահովելու միջոցով:

Փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները, հետևաբար պետք է կարևորել նաև դասախոսի՝ որպես դասընթացը նոր պահանջներին համահունչ կառավարողի պատրաստվածությունը:

Վերոներկայացված հասարակական արդի վարգացումները թելադրում են նոր՝ ուսանողակենտրոն կրթության հայեցակարգի իրագործման անհրաժեշտություն, որի վերջնական նպատակն է մեծացնել ուսանողի դերը ուսուցման գործընթացում: Ուսանողակենտրոն հայեցակարգի համաձայն՝ ուսումնառության գործընթացը ենթադրում է ոչ միայն գիտելիքի փոխանցում, յուրացում և վերարտադրություն, այլ նաև գիտելիքի ձևավորում, մարմնավորում: Ուստի, ուսուցման արդյունավետ գործընթացը, բացի ուսումնառուի մտավոր ընդունակություններից, պետք է վարգացնի նաև գործնական հմտություններ, խմբում համաձայնեցված գործելու կարողություններ, սոցիալական և քաղաքացիական տարբեր հարցերի վերաբերյալ ձևավորված դիրքորոշումներ, կամային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, առաջնորդելու կարողությունը, համառությունը, նպատակայնորեն լավագույն արդյունքի հասնելու ձգտումը և այլն: Դրանք պետք է նկատի ունենալ դասընթացի կառուցման և կառավարման ժամանակ՝ ապահովելով տրամաբանական փոխպայմանություն պլանավորման, իրագործման և ստացվող կրթական ելքային արդյունքների միջև:

4

Նպատակներ և կրթական էլքային արդյունքներ

Կրթական ելքային արդյունքների սահմանումը

«Մարդիկ հաճախ անհաջողություններ են ունենում կյանքում ոչ այն պատճառով, որ կարողության, խելքի կամ նույնիսկ քաջության պակաս ունեն, այլ պարզապես այն պատճառով, որ նրանք երբևէ չեն կենտրոնացնում իրենց ջանքերը, էներգիան կոնկրետ նպատակի շուրջ»:

Էլբերտ Հուբբարդ

Տեսական ակնարկ

Ուսուցման նպատակները ձևակերպելու համար շատ մասնագետներ հիմնվում են հայտնի Բլումի տաքսոնոմիայի վրա, որն առաջին անգամ ներկայացվել է 1958 թվականին **«Կրթական նպատակների տաքսոնոմիա, կրթական նպատակների դասակարգում»** ձեռնարկում: Մինչ այսօր Բլումի առաջարկած տաքսոնոմիան հիմնական և նշանակալի տեղ է զբաղեցնում կրթական ծրագրերի, դասընթացների, կրթական վերջնարդյունքների մշակման և ձևակերպման համար: Բլումի տաքսոնոմիայի համաձայն՝ կրթական նպատակները բաժանվում են երեք «դաշտերի»՝ **հուզական, հոգեշարժողական (վարքային) և ճանաչողական:**

Ուսուցման **հուզական** խնդիրներն ուղղված են ուսումնասիրվող այս կամ այն երևույթի նկատմամբ հուզական վերաբերմունքի, դիրքորոշումների ձևավորմանը և զարգացմանը (ինչ են մտածում Ձեր ուսանողներ):

Ուսուցման **հոգեշարժողական** խնդիրներն ուղղված են մասնագիտական վարքի և հմտությունների ձևավորմանը (ինչ վարքագիծ են դրսևորում Ձեր ուսանողները մասնագիտական խնդիրներ հաղթահարելիս):

Ուսուցման **ճանաչողական** խնդիրներն ուղղված են ուսումնասիրվող նյութի վերաբերյալ իմացության, ըմբռնման, կիրառման, վերլուծության, համադրման և գնահատման կարողությունների ձևավորմանը (ինչ գիտեն Ձեր ուսանողներ):

Դասավանդողները կրթական ելքային արդյունքները սահմանելիս առավելապես անդրադառնում են միայն ստորին երկու մակարդակներին:



Նկար 2. *Բլումի տաքսոնոմիան*

***Աղյուսակ 1**. Բլումի տաքսոնոմիայի մեկնաբանությունը*

Մակարդակ	Սահմանում	Համապատասխան բայեր	Ցուցաբերվող վարքագիծ
Գիտելիք	Ուսանողը մոտավորապես հիշում է ստացած տեղեկատվությունը, գաղափարները, բայց երբեմն չի հասկանում ամբողջությամբ:	Գրել, թվարկել, անվանել, նշել, սահմանել:	Օրինակ՝ ուսանողը կարողանում է թվարկել Բլումի տաքսոնոմիայի վեց մակարդակները:
Ընկալում	Ուսանողը հասկանում է, ընկալում և վերարտադրում ստացած տեղեկատվությունը:	Բացատրել, ամփոփել, վերաձևակերպել, նկարագրել:	Օրինակ՝ ուսանողը կարողանում է բացատրել Բլումի տաքսոնոմիան:
Կիրառում	Ուսանողը ընտրում է, փոխանցում և օգտագործում տվյալներն ու տեղեկատվությունը՝ նվազագույն ուղղություն ստանալով խնդիրները լուծելու, հաղթահարելու համար: Կարողանում է պատկերացնել վերացական, տեսական հասկացությունների կիրառությունը:	Կիրառել, դուրս հանել, լուծել, ցուցադրել, ներկայացնել, գործարկել, կառուցել:	Օրինակ՝ ուսանողը կարողանում է նշել դասավանդման նպատակները՝ Բլումի տաքսոնոմիայի յուրաքանչյուր մակարդակի համաձայն:
Վերլուծություն	Ուսանողը տարբերում է, դասակարգում և համակցում ենթադրությունները, վարկածները, փաստերը և այլն:	Վերլուծել, տարբերակել, համեմատել, տարանջատել:	Օրինակ՝ ուսանողը կարողանում է համեմատել և վերլուծել տեսությունը իմացական և հուզական մակարդակներում:
Համադրություն	Ուսանողը համակցում է գաղափարները՝ ստեղծելով կրթական արդյունք, որը նոր է իր համար: Պահանջվում է ստեղծագործական և վերլուծական մտածողություն:	Ստեղծել, ձևավորել, վարկածներ գրել, բացահայտել, վարգացնել, կատարելագործել:	Օրինակ՝ ուսանողը կարողանում է իմացական, հուզական և հոգեշարժողական առանձնահատկությունների համաձայն ստեղծել դասակարգման համակարգ՝ կրթական նպատակները սահմանելու համար:
Գնահատում	Ուսանողը գնահատում է, քննարկում և քննադատում հստակ չափանիշների հիման վրա, կատարում եզրահանգումներ:	Դատել, առաջարկություններ անել, քննադատել, արդարացնել:	Օրինակ՝ ուսանողը կարողանում է քննարկել Բլումի տաքսոնոմիայի հիման վրա նպատակներ սահմանելու իրատեսականությունը:

Հիմնվելով Բլումի տաքսոնոմիայի վրա՝ շատ մասնագետներ շարունակեցին կրթական նպատակների տաքսոնոմիաների վարգացումը՝ շեշտադրելով այս կամ այն կողմը: Այսօր գոյություն ունեն ժամանակակից ուսումնական նպատակների ձևակերպման տարբեր տաքսոնոմիաներ:

Կրթական արդյունքներ

«Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույցում (Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ., 2010) կրթական արդյունքները սահմանվում են որպես «կրթական ծրագիրը մշակողների կողմից պլանավորվող ակնկալիքներ, որոնք նկարագրում են, թե ծրագրի ավարտին ինչ պետք է **իմանա, հասկանա և կարողանա ցուցաբերել** սովորողը»: Գիտելիքի և իմացության, մտավոր և գործնական հմտությունների, ինչպես նաև բարոյական արժեքների, միջանձնային փոխհարաբերությունների համակցությունը ձեռնարկում ներկայացվում է որպես սովորողի կողմից ձեռք բերվող կոմպետենցիա:

գիտելիք + հմտություններ + արժեքներ = կոմպետենցիա

«Կոմպետենցիա» և «հմտություն» հասկացությունները երբեմն կիրառվում են որպես հոմանիշներ, սակայն որոշ հետազոտողներ փորձ են անում տարանջատելու այս հասկացությունները՝ հմտությունների վարգացումը դիտարկելով որպես կոմպետենցիայի վարգացման նախապայման կամ հմտությունը մեկնաբանելով որպես կոմպետենցիայի կարևոր բաղադրիչ: Հաճախ հմտությունը սահմանվում է որպես նպատակասլաց վարքագիծ՝ ուղղված գործողության արագ և ճշգրիտ կատարմանը, ինչը հնարավոր է վարգացնել ժամանակի ընթացքում:

Եթե կոմպետենցիաները հնարավոր է վարգացնել տարիների ընթացքում՝ տարբեր դասընթացների խելամիտ համադրմամբ (օրինակ՝ վերլուծական մտածողություն), ապա շատ հմտություններ հնարավոր է վարգացնել նույնիսկ մեկ դասընթացի շրջանակներում (օրինակ՝ տեքստը պարբերությունների տրոհելու հմտություն):

Ուսուցման տարբեր տեսանկյուններից գնահատվող հմտությունները և կարողությունները

Դասընթացի շրջանակներում ճանաչողական հմտությունների և կարողությունների գնահատումը ներառում է հետևյալ կողմերը.

- *հասկանալ (ընկալել և կիրառել),*
- *իմաստավորել,*
- *որոշումներ կայացնել, տեսակետ ձևակերպել և*
- *իմաստը վերարտադրել:*

Դասընթացի շրջանակներում **հուզական** հմտությունների և կարողությունների գնահատումը ներառում է.

- *եզրահանգումներ կատարելը (երևույթին գնահատական տալը),*

- *արժևորումը և բնութագրումը,*
- *հուլական պատասխան արձագանքները,*
- *ժամանակի և այլ ռեսուրսների կառավարումը:*

Դասընթացի շրջանակներում **հոգեշարժողական** հմտությունների և կարողությունների գնահատումը ներառում է

- *առարկաների և գործիքների նպատակային կիրառումը,*
- *ստեղծագործական կամ ֆիզիկական աշխատանքը,*
- *թվային և հաղորդակցական սարքավորումների օգտագործումը:*

Դասընթացի շրջանակներում **հաղորդակցական** հմտությունների և կարողությունների գնահատումը ներառում է.

- *իմաստավորված փաստարկի ձևակերպումը,*
- *ինքնաներկայացումը և համոզիչ բանավոր ելույթը:*

Ճշգրիտ նպատակների ու խնդիրների սահմանումը՝ որպես կրթական ելքային արդյունքներին հասնելու միջոց

Դասընթացի ծրագրի շրջանակներում հստակ սահմանված նպատակները և խնդիրները կարևոր են թե՛ դասախոսի և թե՛ ուսանողների համար: Դասընթացի նպատակներն ու խնդիրները անհրաժեշտ է որոշակիացնել՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից և առարկայի գիտական էությունից:

Նպատակների հստակ ձևակերպումը թույլ է տալիս խուսափել ուսումնառության ընթացքում անհամաձայնությունների առաջացումից. ձևակերպման մեջ պետք է արտացոլվեն.

- հասարակության ցանկությունները և պահանջները ապագայի վերաբերյալ,
- համալսարանի կամ ֆակուլտետի կրթական ծրագրի առաջնային կետերը,
- տվյալ բնագավառում սպասվող առաջիկա վարգացման ուղղությունները,
- ուսանողների բնութագրերը՝ ընդհանուր կրթվածության մակարդակը, ունակություններն ու հմտությունները:

Նպատակները կրթության ակնկալվող արդյունքների ընդհանուր հիմնավորումներ են, որոնք հիմք են խնդիրների ձևակերպման համար: Օրինակ՝ «արդյունավետ հաղորդակցության ապահովումը», «հիմնախնդիրը տրամաբանորեն լուծելու ունակությունների վարգացումը»:

Խնդիրները ցանկալի արդյունքներն են, մասնավոր պնդումները այն ամենի մասին, թե ինչ պետք է սովորեն ուսանողները տվյալ առարկան ուսումնասիրելու արդյունքում: Խնդիրները և կրթական արդյունքները ձևակերպելիս անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե ուսանողը ինչ պետք է իմանա և կարողանա դասընթացի ավարտին, ընդ որում՝ կրթական արդյունքները պետք է լինեն հասանելի, իրատեսական, չափելի կամ ստուգելի:

Որպեսզի դասընթացի գերնպատակին կամ առաքելությանը հասնելու ուղին ավելի տեսանելի ու հասկանալի լինի, որպեսզի հնարավոր լինի վերլուծել այն, թե որքանով են իրականանալի սահմանված նպատակները, անհրաժեշտ է հստակ և ճիշտ սահմանել խնդիրները: Դրա համար խնդիրները պետք է լինեն «ՍՄԱՐԹ» (SMART): SMART-ը հապավում է, որը լայն կիրառում ունի տարբեր բնագավառներում, հիմնականում կառավարման մեջ, սակայն այն կիրառելի է նաև կրթական նպատակների ու խնդիրների ձևակերպման պարագայում: Այն իրենից ներկայացնում է որոշակի չափանիշներ, որոնց պետք է համապատասխանեն խնդիրները: Ստորև ներկայացնում ենք համընդհանուր կիրառելի չափանիշներ, սակայն նշենք, որ երբեմն SMART հապավումը այլ կերպ է մեկնաբանվում:

Այսպիսով՝ խնդիրները պետք է լինեն.

S կոնկրետ, պարզ ձևակերպված *(Specific)*,
M չափելի, ստուգելի *(Measurable)*,
A հասանելի, իրատեսական, հնարավորություններին համապատասխանող *(Attainable)*,
R նշանակալի, համատեքստին վերաբերող *(Relevant)*,
T հստակ ժամանակային սահմաններ ունեցող *(Timely)*:

Դասընթացի խնդիրները ձևակերպելիս անհրաժեշտ է մանրամասն նկարագրել այն բնութագրիչները, որոնք դասընթացի ավարտին պետք է վերագրվեն ուսանողին, ինչպես նաև այն պայմաններն ու չափանիշները, որոնք սահմանում են արդյունքների ընդունելի մակարդակը: Հստակ սահմանված նպատակները կօգնեն խուսափելու սուբյեկտիվ գնահատումից՝ դարձնելով գործընթացն առավել վերահսկելի:

Ո՞րն է նպատակների ու խնդիրների տարբերությունը

Երկուսի՝ թե՛ նպատակների և թե՛ խնդիրների ձևակերպման ժամանակ կիրառվում է «արդյունքների» լեզուն. բնորոշող գործոն, որով տարբերակվում են նպատակներն ու խնդիրները: Նպատակները արտահայտում են նախատեսված արդյունքները ընդհանուր առմամբ, իսկ խնդիրները՝ մասնավոր:

Այսպիսով՝ նպատակների և խնդիրների տարբերություններն են.

- նպատակները ավելի ընդգրկուն են, ընդհանուր, իսկ խնդիրները՝ նեղ և ճշգրիտ,
- նպատակները դժվար չափելի են և վերացական, իսկ խնդիրները՝ շոշափելի ու կոնկրետ,
- նպատակները հնարավոր չէ վավերացնել, իսկ խնդիրները հնարավոր է:

Յուրաքանչյուր կրթական նպատակից կարող են բխել մի քանի խնդիրներ և կրթական արդյունքներ:

նպատակ 1	խնդիր 1 խնդիր 2	պարզ գիտելիք
նպատակ 2	խնդիր 3 խնդիր 4	բարդ գիտելիք

Օրինակ՝

Նպատակ.

Զարգացնել ուսանողի՝ կրոնական բազմազանության հետ աշխատելու մասնագիտական գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

Խնդիր 1. *Ուսանողը պետք է կարողանա մեկնաբանել հիմնական կրոնական գաղափարախոսությունների ազդեցությունը մասնագիտության պատմական զարգացման ընթացքի վրա:*

Խնդիր 2. *Ուսանողը պետք է վերլուծի կրոնական արժեքների և մասնագիտական արժեքների միջև եղած կապերը:*

Դասընթացի խնդիրների և կրթական արդյունքների ձևակերպման ընթացքում կիրառվող հիմնական բայերը.

Դժվար չափելի արդյունքներ	Հեշտ չափելի արդյունքներ
Իմանալ	Բացահայտել
Հասկանալ	Տարբերել
Խորությամբ հասկանալ	Լուծել
Ըմբռնել կարևորը	Դասակարգել
Տիրապետել	Կառուցել | պատկերել
	Թվարկել
	Համեմատել
	Մեկնաբանել

Դասընթացի շրջանակներում կրթական արդյունքները ձևակերպելիս պետք է հնարավորինս խուսափել վերոնշյալ աղյուսակի ձախ մասում տեղադրված բայերից, որոնք բավականին բարդացնում են արդյունքների չափումը և օբյեկտիվ գնահատումը: Դրանք պետք է փոխարինվեն այնպիսի բայերով (աջ մաս), որոնք կմեծացնեն օբյեկտիվ գնահատման հնարավորությունները:

Դասընթացի շրջանակներում կրթական արդյունքները սահմանելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել հետևյալ հանգամանքները. ուսումնառության ո՞ր տարվա համար է նախատեսված տվյալ առարկան, ուսանողների հիմնարար գիտելիքն առարկայի վերաբերյալ ի՞նչ մակարդակի վրա է, որո՞նք են ուսանողների՝ առարկայի հետ կապված նախասիրությունները և սպասումները, ինչպիսի՞ նախապայման առարկաներ են ուսումնասիրվել մինչ այդ, ի՞նչ տեղ ունի այդ առարկան տվյալ մասնագիտության ուսումնական ծրագրում և այլն:

3

Դասավանդման մեթոդներ

Դասավանդման և ուսումնառության վերափոխումը

Ուսանողակենտրոն մոտեցման առանձնահատկությունները

Գլոբալ աշխարհում տեղի ունեցող համընդհանուր փոփոխությունների պայմաններում բարձրագույն կրթական համակարգի վերջին նվաճումները դասավանդման ուսանողակենտրոն մոտեցումը դարձնում են առավել արդյունավետ՝ մեծացնելով ուսանողների ակտիվ մասնակցությունը և ինքնուրույնությունը սովորելու գործընթացում: Այս նոր մոտեցումը նոր պահանջներ է դնում դասախոսի առջև՝ ինչպես նրա դերի և գործառույթների, այնպես էլ դասընթացի ծրագրի կառուցման, նպատակների և կրթական արդյունքների ձևակերպման համար:

Դասընթացը կառավարելիս դասավանդողը իր համար պետք է գտնի հետևյալ հարցերի պատասխանները.

1. **Որո՞նք են ուսանողի ուժեղ և թույլ կողմերը: Ի՞նչ բազային գիտելիք և կարողություններ ունի ուսանողը:**
2. **Որտե՞ղ եմ ցանկանում տեսնել ուսանողին տարիներ անց, ինչպիսի՞ գիտելիքներով և հմտություններով վինված:**
3. **Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով է հնարավոր հասնել ցանկալի արդյունքին:**

Լի Ալենը (Lee Allen, 1996) նշում է ուսանողակենտրոն դասավանդման հետևյալ առանձնահատկությունները.

- Ուսանողները սովորում են տեղեկատվությունը հայթայթել ինքնուրույն և այն վերածել գիտելիքի:
- Ուսանողների կողմից դասընթացը գնահատելը կողմնորոշիչ դեր ունի. այն օգնում է դասախոսին դասավանդման արդյունավետության մասին ճիշտ պատկերացում կազմելու:
- Հաջողակ ուսանողը պետք է ճիշտ հարցադրումներ կատարի՝ դասախոսների կողմից ընտրված փաստերը ուղղակի ներկայացնելու փոխարեն:
- Ուսանողները դառնում են ակտիվ մասնակիցներ՝ սովորողներ, ոչ թե պարզապես լսարան՝ դասախոսությունների համար:
- Ուսանողները սովորում և գնահատվում են ոչ միայն անհատական մասնակցության համար, այլ նաև թիմային աշխատանքների:
- Դասավանդողն ուղղորդում է ուսանողին դեպի քննադատական մտածողություն, օգնում նրան ձևակերպելու խնդրահարույց հարցեր և բացահայտելու դրանց լուծման առավել արդյունավետ ուղիներ:

Ուսանողակենտրոն և դասախոսակենտրոն ուսուցման համեմատությունը

Դասախոսակենտրոն ուսուցում	Ուսանողակենտրոն ուսուցում
Գիտելիքը օբյեկտիվորեն փոխանցվում է դասախոսից ուսանողին:	Ուսանողները համատեղ կառուցում են գիտելիքը՝ տեղեկատվություն ձեռք բերելու, համադրելու և ինտեգրելու միջոցով՝ կիրառելով և վարգացնելով հաղորդակցվելու, քննադատաբար մտածելու, հիմնախնդիրներ լուծելու և այլ հմտություններ:
Ուսանողները տեղեկատվության պասիվ ընդունողներ են:	Ուսանողները ակտիվորեն մասնակցում են տեղեկատվություն ձեռք բերելու և դրա հիման վրա գիտելիք ձևավորելու գործընթացին:
Հիմնական շեշտադրումը կատարվում է այնպիսի գիտելիքի ձեռքբերման վրա, որը ապագայում կիրառելիության համատեքստից դուրս է:	Հիմնական շեշտադրումը կատարվում է գիտելիքի արդյունավետ կիրառման վրա, ինչն անհրաժեշտ է իրական կյանքի հիմնախնդիրները լուծելու համար:
Դասախոսի հիմնական դերը սահմանափակվում է տեղեկատվություն տրամադրելով և սովորողին գնահատելով:	Դասախոսի հիմնական դերը ուղղորդելն է: Դասախոսը և ուսանողները համատեղ են գնահատում ձեռք բերված գիտելիքը:
Դասավանդումը և գնահատումը միմյանցից անկախ են:	Դասավանդումը և գնահատումը փոխսերտաճած են:
Գնահատումը օգտագործվում է ուսումնառության մոնիթորինգի նպատակով:	Գնահատումն օգտագործվում է թերությունները ճշտելու և խրախուսելու նպատակով:
Հիմնականում խրախուսվում են ճիշտ պատասխանները:	Ուսանողները հիմնականում գիտելիք են ձեռք բերում՝ փորձելով նոր հարցադրումներ կատարել, սովորում են՝ ուղղելով սեփական սխալները:

Ցանկալի արդյունքը գնահատվում է օբյեկտիվորեն կառուցված թեստերի, հարցաշարերի միջոցով:	Ցանկալի արդյունքը գնահատվում է տարբեր նախագծերի, ելույթների, հանձնարարականների և այլնի միջոցով:
Կարևորվում է միայն տվյալ դասընթացը:	Կարևորվում են նաև միջառարկայական հիմնախնդիրները:
Մթնոլորտը մրցակցային է, անհատները աշխատում են առանձին:	Մթնոլորտը համագործակցային է և աջակցող:
Միայն ուսանողներն են համարվում սովորողներ:	Դասախոսները և ուսանողները սովորում են միասին և միմյանցից:

Ուսանողակենտրոն դասավանդումը առաջին պլան է մղում ուսանողին, ոչ թե դասախոսին. կարևորվում է, թե ինչ է անում և ինչպես է իրեն դրսևորում ուսանողը, ոչ թե դասախոսը:

Ըստ Մերիլին Վեյմերի՝ ուսանողակենտրոն դասավանդման շրջանակներում անհրաժեշտ է պատասխանել հետևյալ չորս կարևոր հարցերին.

- **Ի՞նչ են սովորում ուսանողները:**
- **Ինչպե՞ս են սովորում ուսանողները:**
- **Ինչպիսի՞ պայմաններում են սովորում ուսանողները:**
- **Ի՞նչ դիրքորոշում ունեն ուսանողները կրթության հետագա ընթացքի վերաբերյալ:**

Դասընթացի բովանդակության կառուցումը ուսանողակենտրոն դասավանդման պարագայում

- Դասընթացի շրջանակներում առաջացող հիմնախնդիրները հնարավոր չէ ամբողջովին ընդգրկել մատուցվող նյութի մեջ: Այն պետք է լինի հմտություններ, ինչպես նաև ընդհանուր և նեղ մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու համար ռազմավարական միջոց:

- Դասավանդման ուսանողակենտրոն մոտեցման պարագայում դասընթացի շրջանակներում անհրաժեշտ է աշխատել ուսանողի անձնային հատկանիշների զարգացման ուղղությամբ: Օգնելով նրանց ճանաչելու սեփական ուժեղ և թույլ կողմերը, գնահատելու արտաքին միջավայրում առկա հնարավորություններն ու վտանգները՝ կկարողանաք սովորեցնել, թե ինչպես կարելի է ուժեղ կողմերն ու հնարավորություններն օգտագործելով՝ ժամանակի ընթացքում վերացնել թույլ կողմերը և խուսափել սայթաքումներից:

- Ուսանողակենտրոն դասավանդմամբ նյութի բովանդակության յուրացումը կարելի է ապահովել փորձի, կիրառման միջոցով՝ ապահովելով հիմնարար գիտելիքի մեծ պաշար:

Ուսանողակենտրոն դասընթացի կառավարման հինգ կարևոր կողմերը

1. Դասաժամին իշխանության հավասարակշռությունը

- Լսարանը պետք է դարձնել իրական կյանքի փոքրիկ մոդել, որտեղ բոլոր կողմերը հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց գաղափարներն ու համոզմունքները:
- Համագործակցություն՝ մրցակցության փոխարեն. դասաժամին ուսանողները պետք է սովորեն սովորել միմյանցից:

2. Ուսուցման նյութի բովանդակության նշանակությունը

- Դասավանդման կառուցողական մոտեցման համաձայն՝ ուսանողները սովորելու ընթացքում կառուցում են իրենց գիտելիքները, բացահայտում այդ գիտելիքների՝ իրենց համար առաջնային նշանակությունը՝ դրանք պասիվ կերպով յուրացնելու փոխարեն:
- Նոր գիտելիքների ձեռքբերումը ավելի հաճախ տեղի է ունենում սոցիալական միջավայրում: Ուստի լսարանային միջավայրի նմանեցումը վերջինիս կապահովի ուսումնառության արդյունավետությունը:
- Ուսանողներից պահանջվում է ստեղծագործական մոտեցում և կազմակերպվածություն: Պետք է ձգտել, որ ուսանողները ուսումնառության ընթացքում սովորեն ձևակերպել իրենց հարցերը և ներկայացնել իրենց տեսակետները:

Ո՞րն է ինձ համար դասավանդման դասախոսակենտրոն մոտեցումից ուսանողակենտրոն մոտեցմանն անցնելու ամենից արդյունավետ միջոցը:

Ինչպե՞ս կարող եմ դառնալ ուսուցման միջնորդ կամ ուղղորդող:

Ո՞րն է ուսանողին տրված ազատության և անհրաժեշտ վերահսկողության սահմանը:

Ի՞նչ է անհրաժեշտ ներառել դասընթացի բովանդակության մեջ և ի՞նչն է պետք բացառել: Ինչու՞:

3. Դասավանդողի դերը

- Դասավանդողի նպատակն է ուսանողներին օգնել ձեռք բերելու, մտապահելու նոր գիտելիքներ և դրանք կիրառելու հմտություններ:

- Դասավանդողը պետք է կարողանա հստակ գնահատել, թե իր այս կամ այն գործողությունը ինչ ազդեցություն է ունենում ուսուցման գործընթացի վրա և ինչպես է նպաստում կրթական ելքային արդյունքների ձևավորմանը:

- Դասավանդողի դերն է նպաստել ինքնուրույն սովորելու կարողության ձևավորմանը, ինչպես նաև ուսանողի ինքնագիտակցության անընդհատ զարգացմանը:

4. Սովորողի պատասխանատվությունը

Արդյունավետ ուսուցման գործընթացը այժմ արդեն չի դրսևորվում սոսկ նյութի վերարտադրությամբ. ուսանողի դերն անցնում է ինքնուրույն աշխատանքի սահմանները՝ երբեմն վերածվելով բարդ թիմային աշխատանքի: Այս պարագայում փոխվում են նաև ուսանողի պատասխանատվության շրջանակները. ինքնուրույն աշխատելու կարողությունից զատ՝ առաջանում է թիմում արդյունավետորեն աշխատելու անհրաժեշտություն:

5. Գնահատման նպատակը և ընթացքը

- Երբեմն դասավանդողները, սահմանելով վերացական նպատակներ և խնդիրներ, դասընթացի ավարտին դժվարանում են անաչառորեն գնահատել: Ուսանողակենտրոն դասավանդման մեթոդների կիրառման պարագայում, երբ տարաբնույթ կարող են լինել կրթական ելքային արդյունքների ձևավորմանը նպատակաուղղված լսարանային և արտալսարանային, ինքնուրույն կամ թիմային աշխատանքները, անհրաժեշտ է հնարավորինս հստակ սահմանել և հիմնավորել գնահատման չափանիշները:

- Դասավանդողների կողմից գնահատումը երբեմն դիտարկվում է որպես եզրափակիչ, ամփոփող փուլ: Գնահատումը, սակայն, անհրաժեշտ է դիտարկել որպես ճիշտ ժամանակին և պարբերաբար հետադարձ կապ ապահովելու միջոց, ինչը կնպաստի ուսանողների գիտելիքների և հմտությունների անընդհատ զարգացմանը:

Կրթական համաշխարհային տիրույթում՝ դասավանդման ուսանողակենտրոն մեթոդներին անցնելու գործընթացում, մշտապես առկա են անհամաձայնություններ՝ ուսանողների և դասախոսների կողմից: Սակայն պետք է ի նկատի ունենալ, որ ուսանողները՝ որպես նոր սերնդի ներկայացուցիչներ, ավելի արագ են հարմարվում նոր միջավայրին, քան դասախոսները:

Ինչու՞ են ընդդիմանում ուսանողները	Ինչու՞ են ընդդիմանում դասախոսները
• Պահանջվում է ավելի շատ աշխատանք: • Վտանգում են իրենց պատկերացումները ավանդական դպրոցի մասին: • Պատասխանատվությունն ընկնում է իրենց վրա: • Պատրաստ չեն ներկայանալու սովորողի նոր կերպարով:	• Որոշակիորեն նվազեցվում է լսարանում իրենց իշխանությունը և վերահսկման հնարավորությունները: • Նրանք այլևս իրենց դաշտում բացառիկ փորձագետ չեն: • Որոշ դասախոսներ պատրաստ չեն աշխատելու իրենց հմտությունների վարգացման ուղղությամբ՝ պայմանավորված անձնական, տարիքային և այլ հանգամանքներով:

Օգտակար խորհուրդներ դասավանդման ուսանողակենտրոն մոտեցմանը անցնելու վերաբերյալ
• Ձևավորե՛ք կրթության վերաբերյալ ամբողջական, համաձայնեցված և կոնկրետ գաղափար (փիլիսոփայություն): Նախ ձևավորե՛ք Ձեր չափելի մոտեցումները, որոնք այնուհետ պետք է ընկած լինեն Ձեր ժամանակային գործողությունների հիմքում: • Աստիճանաբար, հետևողական կերպով կատարե՛ք հնարավոր փոփոխություններ՝ համաձայն Ձեր նախապես մշակած նախագծի: • Ակնկալե՛ք հաջողության իրատեսական արդյունքներ: • Սեփական անձի և կարողությունների մասին ունեցե՛ք լայն և ճշգրիտ պատկերացումներ: Պահպանե՛ք հետադարձ կապ, փնտրե՛ք և լսե՛ք կարծիքներ ուսանողներից, գործընկերներից և փորձագետներից: • Դասընթացի կամ նրա բաղկացուցիչների (հանձնարարականներ, առաջադրանքներ, խնդիրներ և այլն)վերաբերյալ հետադարձ կապ ունենալուց հետո անհրաժեշտության դեպքում ունա՛կ եղեք Ձեր դասընթացի մեջ կատարելու փոփոխություններ, լրացումներ:

Ուսանողակենտրոն դասավանդման մեթոդները

Դասավանդման ուսանողակենտրոն մեթոդների հիմնական 5 խմբերը

Այժմ ներկայացնենք դասավանդման մի քանի մեթոդներ՝ լսարանային հնարավորությունների, ուսանողների ընդհանուր թվաքանակի, տարիքային խմբի համադրությամբ, վերլուծենք դրանց առավելությունները, թերությունները, կիրառման և արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

Նշենք, որ դասավանդվող նյութի դյուրին և հիմնավոր յուրացումը ուսանողների կողմից կախված է ոչ միայն նրանց ընդունակություններից, բավային կրթությունից և դասավանդման մեթոդներից, այլև սովորելու առավել նախընտրելի ոճից: Այսպես՝ կան մարդիկ, որոնց համար առավել նախընտրելի է տեղեկատվության (գիտելիքի) պատկերային կամ տեսողական, մյուսների համար՝ լսողական կամ հաղորդակցական, երրորդների համար՝ շոշափողական յուրացումը:

Լսարանում միշտ առկա են բավային տարբեր գիտելիքներով, սովորելու տարբեր ոճեր նախընտրող ուսանողներ: Հետևաբար՝ դասընթացի կառավարման արդյունավետությունը կբարձրանա, եթե դասավանդման մեթոդները համադրեք այնպես, որ գործարկվեն տարբեր զգայարաններ: Այդ դեպքում յուրաքանչյուր ուսանողի համար նյութի յուրացումը կհասնի առավելագույն մակարդակի:

«

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՍՆԵԼՈՒ ՁԵՐ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՀԱՄԱԴՐՄԱՆ
ՄԻՋՈՑՈՎ:

Դասավանդման մեթոդների հինգ խմբեր

Դասախոսություններ

Երկար տարիներ դասախոսությունը՝ որպես դասավանդման ավանդական մեթոդ, ամենից լայն տարածում ունեցող ձևն է եղել ինչպես անգլոամերիկյան, այնպես էլ գերմանական դպրոցներում: Այն սովորողների խմբին նոր տեղեկատվություն կամ դասընթացի ընդհանուր գաղափարը ներկայացնելու ամենից արդյունավետ եղանակն է:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
• Հնարավորություն է տալիս մեծածավալ տեղեկատվությունը ներկայացնելու միաժամանակ մեծ թվաքանակով ուսանողների: • Ընձեռում է օժանդակ միջոցների կիրառման լայն հնարավորություններ, ինչպիսիք են համակարգչային ծրագրերի միջոցով նյութը ներկայացնելը, ցուցանակները, տեսաերիկները և այլն: • Միակողմանի գործընթաց է, գրեթե ամբողջությամբ վերահսկելի միջավայր՝ դասավանդողի ակտիվ դերակատարմամբ: • Դասավանդողը հնարավորություն ունի հստակ պլանավորելու իր դասընթացը՝ նախապատրաստելով դասավանդվող նյութը և օժանդակ միջոցները:	• Դասավանդողի դերի գերակշռումը սովորաբար ծնում է ձանձրալի, պասիվ մթնոլորտ: • Դասավանդողի հետ հետադարձ կապ ստեղծելու համար ուսանողներն ունեն սահմանափակ հնարավորություններ (քննարկումների, երբեմն՝ հարցերի համար): • Դասավանդողը հստակ պատկերացում չի կարող կազմել այն մասին, թե ուսանողները որքանով են յուրացրել նյութը: • Ուսանողները հաճախ դժվարությամբ են ինտեգրվում ուսուցման գործընթացին՝ կանգնելով գիտելիքը վատ յուրացնելու և արագ մոռանալու փաստի առջև:

ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Դասախոսությունը՝ իբրև մեթոդ, առավել նպատակահարմար է կիրառել մեծ լսարաններում, օրինակ՝ քառասունից ավելի ուսանողների առկայության դեպքում:
- Նախապես պլանավորե՛ք դասախոսությունը, պատրաստե՛ք օժանդակ միջոցներ (ցուցադրություններ, տեսագրություններ, նկարներ և այլն):
- Նախապես տեղեկացե՛ք, թե լսարանում ինչպես են տեղաբաշխված ուսանողները կամ հնարավորության դեպքում ինքներդ կբաղվեք այդ հարցով. մասնակիցները պետք է հավասար հնարավորություններ ունենան տեսնելու օժանդակ միջոցները, լսելու դասախոսությունը: Եթե մասնակիցների թիվը չի գերազանցում 60-ը, առավել նպատակահարմար է ուսանողների շրջանաձև դասավորությունը մեկ կամ երկու շարքով՝ կախված լսարանի չափից:
- Նախապես առանձնացրե՛ք այն 5-9 առանցքային դրույթները, որոնց շուրջ կառուցում եք այդ օրվա դասախոսությունը:
- Նախապատրաստե՛ք տպավորիչ օրինակներ այդ դրույթների շուրջ, պատմե՛ք առօրեական օրինակներ, ցուցադրե՛ք նկարներ, տեսաերիզներ:
- Ներկայացե՛ք պատշաճ արտաքինով (հագուստ, սանրվածք և այլն), միշտ վերահսկե՛ք Ձեր մարմնի, դեմքի շարժումները, խոսե՛ք բարձրաձայն, հստակ, հասկանալի:
- Միշտ տեսողական կապ պահպանե՛ք ուսանողների հետ, որպեսզի համոզվեք, որ նրանք հետևում են Ձեր մտքի ընթացքին, չեն ձանձրանում:
- Եղե՛ք կենսուրախ, անհրաժեշտ պահին օգտագործե՛ք Ձեր հումորի զգացումը:
- Դասախոսության ընթացքում ստեղծե՛ք հետադարձ կապի հնարավորություն, որպեսզի ստուգեք, թե որքանով են ուսանողները յուրացնում տրամադրվող նյութը. հարցե՛ր տվեք, խրախուսե՛ք նրանց՝ հարցեր տալու Ձեզ, կազմակերպե՛ք ակտիվ քննարկումներ:

Քննարկումներ

Գոյություն ունեն քննարկումների մի շարք հնարավոր մոդելներ: Օրինակ՝ քննարկում դասավանդողի և ուսանողների միջև (դասավանդման ակտիվ մեթոդ)՝ անցած կամ ընթերցանության համար հանձնարարված նյութը կրկնելու նպատակով, կամ խմբային քննարկումներ ուսանողների խմբերի միջև (դասավանդման փոխներգործուն մեթոդ): Վերջին դեպքում ուսանողները սովորաբար բաժանվում են մեկից ավելի խմբերի, և նրանց է հանձնարարվում վերլուծել

նախանշված որևէ հիմնախնդիր դասավանդման նյութի վերաբերյալ: Խմբում ուսանողներից յուրաքանչյուրը ներկայանում է իր գիտելիքներով, փորձառությամբ, արժեքային համակարգով: Արդյունքում խումբը ձևավորում է նոր գիտելիք: Կարևոր է նաև նշել, որ այսպիսի քննարկումները չեն մնում միայն խմբի սահմաններում, այլ վերածվում են միջխմբային ելույթների և քննարկումների:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
• Դասախոսը առավելագույնս հնարավորություն ունի վերահսկելու քննարկվող նյութի բովանդակային սահմանները և ընկալման աստիճանը: • Սովորողներին հնարավորություն է տալիս ավելի խորությամբ յուրացնելու նյութը՝ հարցեր տալու, սեփական կարծիքը քննարկելու միջոցով (մեծ լսարաններում, ընդհանուր դասախոսությունների ժամանակ ուսանողները դժվարությամբ են հարցեր տալիս՝ սովորաբար բարդույթների պատճառով): • Միակողմանի գործընթաց է, գրեթե ամբողջությամբ վերահսկելի միջավայր՝ դասավանդողի ակտիվ դերակատարմամբ: • Ուսանողին հնարավորություն է տալիս հստակեցնելու, արտահայտելու և վերաձևակերպելու իր փորձառությամբ ամրապնդված դիրքորոշումը: • Օգնում է ուսանողին զարգացնելու թիմային աշխատանքի, արդյունավետ հաղորդակցության հմտություններ: • Ուսանողին հնարավորություն է տալիս համադրելու իր գիտելիքներն ու հմտությունները: • Օգնում է ուսանողին զարգացնելու վերլուծական, ստեղծագործական մտածողություն:	• Ժամանակատար է: • Պահանջում է լրացուցիչ հարմարություններ, օրինակ՝ արագ տեղաշարժվող սեղաններ, աթոռներ: • Ավելի շատ տարածք է պահանջվում, քան դասախոսության նպատակով: • Գոյություն ունի այն վտանգը, որ խմբում առավել ակտիվ անդամները կարող են կառավարել, վերահսկել կամ տապալել գործընթացը: • Ինչ-որ չափով հավանական է, որ քննարկման մասնակիցները լուրջ չեն վերաբերվի քննարկմանը, ինչի արդյունքում էապես կտուժի աշխատանքի որակը: • Խիստ դժվար է վերահսկել քննարկումների հաջողության աստիճանը, քանի որ առկա են շատ խմբեր՝ ուսանողների փոքր թվաքանակով: • Դասավանդողը պետք է լրացուցիչ հմտություններ ունենա, որպեսզի ի մի բերի, ընդհանրացնի քննարկման արդյունքները:

ԻՆՉՊԵՏ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Ակտիվ քննարկումները նպատակահարմար է կիրառել դասախոսությունների ընթացքում՝ դասընթացի բովանդակությունը վերհիշելու, ամրապնդելու, ուսանողների ընկալման և մտապահման մակարդակը բարձրացնելու նպատակով:

- Խմբային (ինտերակտիվ) քննարկումները առավել նպատակահարմար է կիրառել մինչև 30-35 ուսանողից բաղկացած խմբերում:

- Ուսանողներին բաժանե՛ք 4-10 հոգուց բաղկացած մի քանի խմբերի՝ կախված ուսանողների թվաքանակից, համատեղելիության աստիճանից, քննարկման կոնկրետ նպատակից և այլն: Նկատենք, որ վերջինով պայմանավորված բաժանումը կարող է կատարվել կա՛մ ուսանողների նախընտրությամբ, կա՛մ Ձեր միջնորդությամբ: Այսպես՝ եթե քննարկում կազմակերպելու նպատակներից է միմյանց հետ հաղորդակցվելու, թիմային աշխատանքներ կատարելու հմտությունների զարգացումը, ապա ինքնե՛րդ կատարեք այդպիսի խմբավորում:

- Հանձնարարե՛ք խմբերին քննարկել կոնկրետ հիմնախնդիրներ. դրանք կարող են տարբեր լինել:

- Նախապես հայտարարե՛ք, թե ինչքան ժամանակ է հատկացված քննարկմանը:

- Քննարկման ընթացքում շրջե՛ք խմբերում:

- Ուղղորդե՛ք ուսանողներին քննարկումը կազմակերպել վերլուծելու, կարծիքներ փոխանակելու միջոցով:

- Ժամանակը սպառվելուն պես յուրաքանչյուր խմբից մեկ կամ երկու հոգու հանձնարարե՛ք ներկայացնել իրենց խմբի քննարկման արդյունքները:

- Կատարե՛ք լրացումներ՝ ընդհանրացնելով քննարկվող նյութը:

- Կատարե՛ք եզրահանգումներ (տեսական):

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը

Ժամանակակից պայմաններում դասընթացի կառավարման բազմաթիվ մեթոդներ իրականացվում են նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների՝ իբրև օժանդակ միջոցների կիրառմամբ:

Անվիճելի է, որ տեղեկատվական տեխնոլոգիաները արմատապես փոխել են կրթության միջավայրը՝ ընդարձակելով կրթության գործընթացը և այն դուրս բերելով լսարանի սահմաններից:

Նորագույն տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս բարձրացնելու դասընթացի արդյունավետությունը՝ տեսաերիզների, նկարների ցուցադրության, էլեկտրոնային գրատախտակների կամ տեխնիկական այլ միջոցների օգնությամբ:

Նորագույն տեխնոլոգիաները կրթության կազմակերպման գործընթաց են ներբերել հեռավար ուսուցման բաղադրիչները՝ էլեկտրոնային փոստերը, դասավարման ընթացքում կառուցվող ինտերնետային բլոգները, վանական սոցիալական ցանցեր, հեռավար ուսուցման համար նախատեսված ծրագրերը: Այսօր հեռավար ուսուցումը կամ կրթությունը լայն քննարկման առարկա է համալսարանական համաշխարհային տիրույթում: Դիտարկենք տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առավելություններն ու թերությունները:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
• Նորագույն տեխնիկական միջոցների կիրառությունը հնարավորություն է տալիս դասավանդման ընթացքում միաժամանակ ակտիվ պահելու տեսողական և լսողական զգայարանները, լրացնելու և հարստացնելու դասավանդման լսարանային մեթոդները: • Նորագույն տեխնոլոգիաների ներգրավումը հնարավորություն է տալիս կրթությունը կազմակերպելու տարածության մեջ՝ ուսուցման գործընթացում ընդգրկելով տարբեր քաղաքների, երկրների ուսանողներին: • Դասախոսի կողմից էլեկտրոնային բլոգների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը հավասարաչափ տարածել ժամանակի մեջ՝ դասավանդվող նյութի մի մասը տեղափոխելով բլոգային տարածք և կազմակերպելով լրացուցիչ արտալսարանային քննարկումներ դասախոսությունների միջև ընկած ժամանակահատվածում: • Նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը մղում է ուսանողներին ավելի ապատ արտահայտելու իրենց մտքերը, կազմակերպելու քննարկումներ, բանավեճեր, լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում ուսումնասիրվող նյութի նկատմամբ:	• Ուսանողները և դասախոսները հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման տարբեր աստիճանի գիտելիքներ և հմտություններ են ունենում, ինչը կարող է լրացուցիչ խոչընդոտ դառնալ դրանք ներգրավելու և դասընթացը արդյունավետ կառավարելու համար: • ՀՀ բուհերը դեռևս չունեն բավարար քանակությամբ լսարանային տեխնիկա, առավել ևս մարզերում: • Բարձրագույն տեխնոլոգիաների կիրառման համար երբեմն անհրաժեշտ է ապահովել հավասարապես հասանելի և որակյալ համացանց, ինչն այսօր դեռևս մեծ խնդիր է Հայաստանում, մասնավորապես՝ մարզերում:

ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Դասախոսության արդյունավետ կառավարման նպատակով նախապես պատրաստե՛ք օժանդակ միջոցներ:
- Նորագույն տեխնոլոգիաների ներդրման պարագայում կիրառվող ծրագրից հեշտությամբ օգտվելու և ապագայում անհաջողության մատնվելու հավանականությունը նվազեցնելու նպատակով ուսանողներին նախապես փոխանցե՛ք բազային գիտելիքներ և հմտություններ:
- Մշտապես հետևե՛ք տեղեկատվական տեխնոլոգիաների նորացմանը և դրանց ինտեգրմանը ուսուցման գործընթացին:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հետ կապված կատարե՛ք փորձի փոխանակում և հարստացրեք Ձեր մեթոդները:
- Նորագույն տեխնոլոգիաներ կիրառելով՝ փոխանակե՛ք այնպիսի գիտելիք կամ տեղեկատվություն, որն ուսանողի համար արժեքավոր է դասընթացը յուրացնելու, ինչպես նաև դասընթացի արդյունքում առավելագույն գնահատական վաստակելու համար:

Դեպքի ուսումնասիրություն

Դեպքի ուսումնասիրությունը գիտելիքի ինտեգրման, փոխանցման և յուրացման արդյունավետ ուղի է: Մեթոդը կիրառելիս ուսանողներին ներկայացվում է իրական կամ երևակայական մի դեպք, պատմություն, իրավիճակ՝ վերլուծության նպատակով: Այն ուսանողներին հնարավորություն է տալիս հասկանալու և բացատրելու իրենց ստացած տեսական գիտելիքները առօրեական, իրական կամ երևակայական օրինակների միջոցով: Ուսումնասիրվող դեպքի բնույթից կախված՝ դասավանդողը դեպքի ուսումնասիրության մեթոդը կարող է կիրառել դասախոսության, քննարկման, դերային խաղի մեթոդների հետ համախառն: Ըստ էության՝ այն դասավանդման այնպիսի ռազմավարություն է, որն ուսանողներին մղում է ակտիվ և ինտերակտիվ քննարկումների՝ գործնական օրինակների միջոցով: Դասընթացի բովանդակությունից և դիտարկվող խնդրից կախված՝ ուսումնասիրվող դեպքը կարելի է ներկայացնել տարբեր կերպ՝ տեքստերի, պատմվածքների, տեսաերիզների, պատկերավոր նկարների միջոցով:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
• Պարզ է, հեշտ կազմակերպելի: • Կարող է կիրառվել անհամաչափ գիտելիքներ ունեցող ուսանողների խմբերում: • Ուսանողները իրենց բազային գիտելիքների, արժեքային համակարգի, զգացողությունների հիման վրա վերլուծում են այլոց փորձառությունը և կատարում նոր եզրահանգումներ: • Պատմությունները գրավում են ուսանողների ուշադրությունը, առաջացնում ոգևորություն, հետաքրքրություն, ձևավորում կարծիք, երբեմն դրդում ուսանողներին փոխելու իրենց կարծիքը: • Զարգացնում են ուսանողի ստեղծագործական, վերլուծական մտածողությունը, նպաստում բարդ իրավիճակներում լուծումներ գտնելու ունակության զարգացմանը:	• Դիտարկվող հիմնախնդիրներին խիստ համապատասխան ուսումնասիրվող դեպքերի հայթայթումը կարող է դժվար լինել: • Պատմությունները հիմնված են հեղինակի ընկալումների, զգացողությունների, գաղափարի վրա և հետևաբար չեն կարող օբյեկտիվ լինել: • Բացառված չէ նաև, որ ներկայացվող խնդիրները կարող են լինել ոչ իրատեսական:

ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Դասախոսության մեթոդի համադրությամբ՝ առավել նպատակահարմար է կիրառել պատմություն ներկայացնելու մեթոդը 35-40-ից ավելի ուսանողներից բաղկացած խմբերում:
- Երբ դասախոսությունը դառնում է ձանձրալի, այն ընդմիջե՛ք մի պատմությամբ, որը կընդգրկի դասախոսության տեսական նյութը:
- Դասախոսությունը կարելի է ընդմիջել նաև ուսանողի կողմից ներկայացված պատմությամբ:

- Պատմության ավարտին կազմակերպե՛ք քննարկում:
- Օգտագործելով տեսական նյութը՝ ուղղորդե՛ք ուսանողների քննարկման ընթացքը և հասցրե՛ք այն ցանկալի կետին՝ համապատասխան եզրակացությամբ:
- Դեպքի ուսումնասիրության բոլոր մեթոդները, ներառյալ համապատասխան պատմությունը, նպատակահարմար է կիրառել խմբային (ինտերակտիվ) քննարկման մեթոդի համադրությամբ՝ մինչև 30-35 ուսանողից բաղկացած լսարաններում:
- Ներկայացրե՛ք ուսումնասիրվող դեպքը կամ նախապես տրամադրե՛ք այն ուսանողներին՝ ինքնուրույն ծանոթանալու նպատակով:
- Ուսանողներին բաժանե՛ք փոքր խմբերի՝ երկու կամ ավելի՝ կախված ուսանողների ընդհանուր թվաքանակից:
- Արագորեն ձևավորե՛ք քննարկման համար մատչելի պայմաններ և տվե՛ք հանձնարարություն (կատարե՛ք հարցադրում):
- Տրամադրե՛ք անհրաժեշտ ժամանակ քննարկման նպատակով:
- Թո՛ւյլ տվեք խմբերին ներկայացնել իրենց քննարկման արդյունքները:
- Կատարե՛ք եզրահանգումներ և ընդհանրացրե՛ք քննարկման արդյունքները:
- Դեպքի ուսումնասիրության նպատակով կատարե՛ք դերային բաժանումներ և կազմակերպե՛ք դերային խաղեր:

Դերային խաղեր

Դերային խաղերի կիրառությունը վարգացնում է ուսանողի գործնական հմտությունները. ուսանողին հաղորդում է ակադեմիական գիտելիք, այդ գիտելիքը կիրառելու հմտություններ և ձևավորված հմտությունների իրավիճակային կիրառման կարողություններ: Այսինքն՝ դերային խաղի միջոցով ուսանողները ստանում են ակադեմիական գիտելիքներ և միաժամանակ վարգացնում իրենց գործնական հմտությունները: Այն հնարավորություն է տալիս դուրս բերելու մատնանշված հիմնախնդիրները և դրանք ներկայացնելու իրականությունն արտացոլող իրավիճակների միջոցով:

Դիտարկենք դերային խաղերի հնարավոր տարբերակները.

- Դասավանդողը ներկայացնում է դասընթացի նյութը և կատարում մի քանի հարցադրում: Ուսանողները բաժանվում են փոքր խմբերի, և խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է դերային խաղ այդ հարցադրումներից մեկի վերաբերյալ: Սովորաբար այդ նպատակով ուսանողները դիմում են իրական կամ երևակայական կոնկրետ դեպքի ներկայացմանը: Դեպքը ներկայացնելու ընթացքում մնացած ուսանողները դիտում են: Ներկայացումներին հաջորդում են քննարկումները:

- Դասավանդողը ներկայացնում է դասընթացի նյութը: Ուսանողները բաժանվում են խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ստանձնում է իր դերը (օրինակ՝ ներկայացնողներ և ընդդիմախոսներ, կողմ և դեմ խմբեր և այլն): Կազմակերպվում է քննարկում, որի ընթացքում միաժամանակ վեր են հանվում և վերլուծվում բազմաթիվ խնդիրների տարբեր կողմերը:

- Դասընթացի բնույթից և ուսանողների ընդհանուր գիտելիքներից կախված՝ կարելի է դիմել նախկին փորձի ներկայացմանը: Այդ դեպքում ուսանողները դիմում են իրենց իսկ փորձառությունից բխող իրավիճակին: Այդպիսի դերային ներկայացմանը հաջորդում է քննարկումը:

- Հնարավոր է կազմակերպել նաև առավել բարդ դերային խաղեր, դուրս գալ դասաժամի սահմաններից՝ առավել վաղ դերաբաժանում կատարելով և ուսանողներին բավականաչափ ժամանակ տրամադրելով՝ դերերը հետազոտելու և նախապատրաստվելու համար:

- Դերային խաղի մեկ այլ տարբերակի դեպքում դասավանդողը կատարում է դերաբաժանում, նախապես հանձնարարում է որոշակի նյութ, դեր, և անկախ իր սեփական դիրքորոշումից՝ ուսանողը պարտավորվում է գործել, ներկայանալ իր ստանձնած դերին համապատասխան

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
• Թարմություն, ակտիվություն է մտցնում դասախոսության մեջ: • Հնարավորություն է տալիս կենտրոնանալու իրական խնդիրների վրա: • Հնարավոր է լինում պարզ կերպով ներկայացնել բարդ հիմնախնդիրները: • Ստեղծվում է այնպիսի միջավայր, որ ուսանողները արագ կողմնորոշվում են իրավիճակի գնահատման և իրենց գործողությունների մեջ՝ քննարկելով և ավելի խորությամբ յուրացնելով դասընթացի հիմնական դրույթները, ներկայացնելով իրենց փորձառությունը, ձևավորելով նոր գիտելիք: • Քանի որ ուսանողները գործողության անմիջական մասնակիցներն են, ձեռք բերված գիտելիքները առավել մնայուն են լինում: • Ուսանողները սովորում են աշխատել տարբեր համոզմունքներ, արժեքային համակարգեր, ընդունակություններ և փորձառություն ունեցող անհատների հետ:	• Բացառված չէ, որ սովորելու գործընթացը կվերածվի վվարճության: • Մասնակիցները կարող են չափից շատ տարվել իրենց դերերով և հետագա վերլուծության ընթացքում կորցնել օբյեկտիվությունը: • Գործողության կատարումը կարող է ինքնանպատակ դառնալ և շեղել դասավանդվող նյութից: • Դերախաղով ներկայացվող դեպքը կարող է ամբողջությամբ չհամապատասխանել վերլուծության նյութին:

ԻՆՉՊԵՏ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Դերային խաղի կիրառման դեպքում հստակեցրե՛ք ուսուցման նպատակը:
- Նախապես պլանավորե՛ք լսարանում դերերի բաժանման ձևը:
- Անհրաժեշտության դեպքում ուսանողներին նախապես ծանոթացրե՛ք վերլուծության նյութին:
- Երբ զգում եք, որ ուսանողները շեղվում են բուն նյութից, միջամտե՛ք նոր հարցադրումներով:
- Դերախաղի ավարտին ներկայացնողներին և դիտորդներին առանձին հարցրե՛ք, թե ինչը նրանց առավել դուր եկավ, և ինչը կարելի էր փոփոխել:
- Հարցրե՛ք ուսանողներին, թե դերային խաղի հատկապես ո՛ր հատվածն էր ուսուցանող, և ինչ սովորեցին արդյունքում:
- Վերջում դո՛ւրս բերեք այն առանցքային հիմնախնդիրները, որոնց ուղղված էր դերային խաղը:

Դասավանդման մեթոդների կիրառման օրինակներ

Թիմային դերեր

Ընդհանուր նկարագիրը

Մեթոդն օգնում է ուսանողներին դասախոսության ընթացքում կենտրոնանալ և լինել դասախոսության ակտիվ մասնակիցը:

Ընդհանուր նկարագիրը

1 Դասախոսության սկզբում ուսանողներին բաժանե՛ք չորս հիմնական թիմերի և տվե՛ք հետևյալ հանձնարարությունները.

Թիմ	*Դեր*	*Հանձնարարություն*
Թիմ 1	Հարցադրողներ	Դասախոսության ավարտին դասավանդողի ներկայացրած նյութի մասին ունենալ առնվազն երկու հարցադրում:
Թիմ 2	Հաստատողներ	Դասախոսության ավարտին ներկայացնել այն գաղափարները, որոնք համարեցին օգտակար, և բացատրել, թե ինչու:
Թիմ 3	Հակադրվողներ	Դասախոսության ավարտին ներկայացնել այն գաղափարները, որոնց շուրջ թիմը տարաձայնություններ ունի, համարում է հակասական, համաձայն չէ, և բացատրել, թե ինչու:
Թիմ 4	Օրինակով հիմնավորողներ	Դասախոսության ավարտին նյութի վերաբերյալ ներկայացնել հստակ օրինակներ և տեսությունը կիրառելու հնարավորություններ:

2 Ներկայացրե՛ք դասախոսության նյութը, որից հետո թիմերին ժամանակ տրամադրե՛ք պատրաստվելու իրենց դերերին համապատասխան:

3 Թիմերին հնարավորությունն տվեք արտահայտվելու, և եթե նույնիսկ ժամանակը չբավարարի, եղե՛ք հետևողական՝ հաջորդ դասին շարունակելով աշխատանքը:

Այլ գաղափարներ

1. Ստեղծե՛ք նոր դերեր, օրինակ՝ թիմերին կարող է հանձնարարվել հակիրճ ներկայացնել, ամփոփել նյութը դասախոսության ավարտին: Մեկ այլ խումբ կարող է դուրս բերել քննական, թեստային հարցեր, որով դասախոսը կարող է ստուգել ուսանողների գիտելիքները:
2. Թիմերին բաժանե՛ք նախապես տպագրված հարցեր և դասախոսության վերջում անդրադարձե՛ք այդ հարցերին: Ուշադիր լսելու, հետևելու դեպքում ուսանողները պետք է կարողանան հեշտությամբ պատասխանել հարցերին: Խրախուսման կարող է արժանանալ այն թիմը, որը կարճ ժամանակահատվածում կպատասխանի առավելագույն հարցերի:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դասախոսություններ» (էջ39), «Քննարկումներ» (էջ 40), «Դերային խաղեր» (էջ 48) բաժինները:

Ուղղորդված գրառումներ

Ընդհանուր նկարագիրը

Գրառումներ կատարելու համար նախապես տրամադրե՛ք բաժանվող նյութը, որի որոշ հատվածներ դատա՛րկ թողեք: Ուսանողները, հետևելով դասախոսությանը, պետք է կարողանան լրացնել բաց թողնված տերմինները, գաղափարները:

Ընթացքը

1 Պատրաստե՛ք բաժանվող նյութը, որը ամփոփում է թեմայի, օրվա դասախոսության հիմնական գաղափարները:

2 Ամբողջական նյութը գրելու, ներկայացնելու փոխարեն՝ որոշ հատվածներ դատա՛րկ թողեք:

3 Օրինակներ.

- Ներկայացրե՛ք տերմիններ և սահմանումներ՝ դատարկ թողնելով կա՛մ տերմինը, կա՛մ սահմանումը լրացնելու հատվածը:

  Օրինակ.

  o Պահանջարկի եկամտային առաձգականություն. _____

  o _____ ապրանքի պահանջվող քանակի տոկոսային փոփոխության և եկամտի տոկոսային փոփոխության հարաբերությունն է:

- Մի՛ լրացրեք ներկայացվող թվարկումների մի մասը:

  Օրինակ.

  Կազմակերպություններում մշակվում է ռազմավարության երեք տեսակ՝
  - _____ կամ _____,
  - գործարար կամ մրցակցային,
  - գործառնական կամ _____:

- Հակիրճ պարբերության ներսում որոշ տերմիններ մի՛ լրացրեք:

---

4 Ուսանողներին տրամադրե՛ք բաժանվող նյութը՝ բացատրելով, որ առաջադրանքն ունի ուսանողների ուշադրությունը կենտրոնացնելու նպատակ:

Այլ գաղափարներ

- Դասախոսությունից հետո ուսանողներին խնդրե՛ք Ձեվ հանձնել իրենց գրառումները, իսկ նրանց տվեք բաժանվող նյութի մեկ ուրիշ օրինակ և խնդրե՛ք նորից գրառումներ կատարել՝ ստուգելու համար մնացորդային գիտելիքը:
- Ուսանողներին տրամադրե՛ք թղթեր, որոնց վրա տպագրված կլինեն հիմնական թեմաների, ենթաթեմաների վերնագրերը, իսկ դատարկ տողերում նրանք պետք է լրացումներ և գրառումներ կատարեն:
- Դասախոսությունը բաժանե՛ք մի քանի հատվածների և ուսանողներին խնդրե՛ք գրառումներ չկատարել մինչև դադարը: Ուշադրությամբ հետևելով՝ ուսանողները պետք է կարողանան դադարի ժամանակ թղթին հանձնել հիմնական գաղափարները:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դասախոսություններ» բաժինը (էջ 39):

Ուղղորդված դասախոսություն

Ընդհանուր նկարագիրը

Մեթոդը օգնում է պարզել ուսանողների գիտելիքների մակարդակը, նախկին փորձը, տեսակետները մինչև ձեր կողմից նյութը ներկայացնելը: Մեթոդը արդյունավետ է առավել վերացական թեմաներ քննարկելիս:

Ընթացքը

1. Մտագրոհի օգնությամբ ուսանողների հետ քննարկե՛ք և գրանցե՛ք նրանց կարծիքները, եզրակացությունները թեմայի վերաբերյալ, խմբավորե՛ք դրանք:

2. Կատարե՛ք հարցադրումներ, որոնք կարող են մեկից ավելի պատասխաններ ունենալ, հանգեցնել տարաձայնությունների և ակտիվ քննարկումների աղբյուր դառնալ (այսինքն՝ անհրաժեշտ է քննարկել վիճահարույց հարցեր):

3. Ուսանողներին զույգերով կամ խմբերով հարցը քննարկելու և պատասխաններ գտնելու կարճ ժամանա՛կ տրամադրեք:

4. Գրանցե՛ք բոլոր կարծիքները՝ փորձելով խմբավորել դրանք ըստ Ձեր կողմից ներկայացվելիք նյութի, տեսության:

5. Ներկայացրե՛ք նյութը և ուսանողներին հնարավորությունն տվեք համեմատելու իրենց արտահայտած կարծիքները և Ձեր ներկայացրած հիմնական գաղափարները: Ընդգծե՛ք նախապես հնչած գաղափարների և Ձեր ներկայացրած նյութի տարբերությունները:

Այլ գաղափարներ

- Կարող եք ուսանողների ներկայացրած գաղափարները նախապես չխմբավորել և վերջում հնարավորություն տալ նրանց բոլորի արտահայտած կարծիքների հիման վրա տարանջատել գաղափարական խմբերը:

- Ինքներդ կարող եք նախապես չխմբավորել գաղափարները և ուսանողների հետ միասին տարանջատել նյութը:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դասախոսություններ» (էջ 39), «Քննարկումներ» (էջ 40) բաժինները:

Հրավիրյալ մասնագետ

Ընդհանուր նկարագիրը

Այս մեթոդը հնարավորություն կտա դասընթացի շրջանակներում հյուրընկալելու այլ դասախոսի, մասնագետի, ով կկարողանա կարճ ժամանակահատվածում արժեքավոր տեղեկատվություն տրամադրել՝ առանց նախապես պատրաստվելու: Մեթոդը միաժամանակ հնարավորություն է տալիս ուսանողներին շփվելու տվյալ ոլորտի մասնագետի հետ և, ամենակարևորը, ակտիվ դեր ունենալու հանդիպման նախապատրաստական աշխատանքներում:

Ընթացքը

1. Դասընթացի շրջանակներում կազմակերպված քննարկումներին հրավիրե՛ք գիտակ մասնագետի, ով կարող է նյութը հիմնավորել գործնական օրինակներով, սեփական փորձով:
2. Հրավիրյալ մասնագետին նախապես տեղեկացրե՛ք, որ հանդիպումը նման է լինելու մամլո ասուլիսի, և ուսանողները լրագրողների դերում են լինելու: Մասնագետի խնդիրն է պատրաստ լինել հակիրճ բացման խոսքի, որից հետո ուսանողները կուղղեն իրենց հուզող բոլոր հարցերը:
3. Ուսանողների հետ քննարկե՛ք մամլո ասուլիսի անցկացման հիմնական կանոնները և նրանց հանձնարարե՛ք նախապես բավարար քանակությամբ հարցեր պատրաստել թեմայի վերաբերյալ:

Այլ գաղափարներ

1. Կարող եք հրավիրել նաև մի քանի մասնագետի և թեմայի վերաբերյալ կազմակերպել առավել մտերմիկ քննարկում: Ուսանողներին կարող եք բաժանել խմբերի՝ ըստ հրավիրված մասնագետների թվի: Քննարկումները և դասաժամը բաժանելով հատվածների՝ ուսանողներին հնարավորություն ընձեռեք հանդիպելու և հարցադրումներ անելու բոլոր մասնագետներին: Խմբային փոքրիկ քննարկումների ժամանակը լրանալուն պես ուսանողներին տեղափոխե՛ք մի թիմից մյուսը և հետևեք, որ բոլորն էլ հայտնվեն նոր խմբերում:
2. Մեկ այլ տարբերակ է հրավիրել մի քանի մասնագետի և ուսանողներին թիմերի բաժանելու փոխարեն՝ կազմակերպել ընդհանուր քննարկում:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դասախոսություններ» (էջ 39), «Քննարկումներ» (էջ 40) բաժինները:

Դերային խաղ

Ընդհանուր նկարագիրը

Որոշ թեմաներ ուսանողները դժվարանում են հասկանալ, նույնիսկ, եթե բանավոր դասախոսությունն ուղեկցվում է տեսողական պատկերներով: Թեման կամ գաղափարը առավել խորությամբ հասկանալուն ուղղված մեթոդներից է դերային խաղը:

Ընթացքը

1. Հստակեցրե՛ք գաղափարը, որը փորձում եք բացատրել, և ուսանողներին ներկայացրե՛ք աշխատանքի ընթացքը: Նախապես լսարանում կատարե՛ք դերային բաժանում՝ ընդգրկելով համարձակ ուսանողներին, որոնք կարող են դերային խաղի միջոցով մատչելի կերպով ներկայացնել գաղափարը:
2. Երբեմն արդյունավետ է նաև քարտերի միջոցով գաղափարներ ներկայացնելը. այս պարագայում նախապես պատրաստե՛ք քարտեր, որոնց վրա գրված կլինեն հանգուցային բառեր, գաղափարներ և այլն: Ուսանողներին տվե՛ք քարտերը և խնդրե՛ք տեղում ձևավորել ու միասին ամբողջականացնել գաղափարը՝ լսարանում կանգնելով ըստ հերթականության և այլն:
3. Միասին քննարկե՛ք կատարված աշխատանքը, խաղը և ընդգծե՛ք այն գաղափարները, որոնք առաջադրանքների միջոցով ներկայացրել եք ուսանողներին:

Այլ գաղափարներ

1. Նկարահանե՛ք դերային խաղի ընթացքը և քննարկե՛ք լսարանում:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Քննարկումներ» (էջ 40), «Դերային խաղեր» (էջ 48) բաժինները:

Տեսահոլովակի վերլուծություն

Ընդհանուր նկարագիրը

Կարծում ենք, քննարկման ենթակա չէ կրթական տեսահոլովակների դիտման արդյունավետությունը, որը, սակայն, որոշ ուսանողների համար երբեմն վվարճանքի, հանգստի միջոց է: Այս մեթոդը կարող է կրթական հոլովակների դիտումն առավել ուղղորդված և նպատակային դարձնել:

Ընթացքը

1. Ընտրե՛ք այն տեսահոլովակը, որը ցանկանում եք ցուցադրել ուսանողներին:
2. Ուսանողներից պահաջե՛ք քննադատական մոտեցում: Հանձնարարե՛ք նրանց ուշադրություն դարձնել, օրինակ, գաղափարի իրատեսականությանը, կիրառելիությանը, հոլովակի տրամաբանական ընթացքին և այլն:
3. Կարող եք նախապես տպագրել բաժանվող նյութեր՝ ենթավերնագրերով՝ դատարկ թողնելով գրառումներ կատարելու համար նախատեսված հատվածները:
4. Տեսահոլովակը դիտելուց հետո կազմակերպե՛ք ակտիվ քննարկում և լսարանում կարծիքների փոխանակման հնարավորությունն ստեղծեք:

Այլ գաղափարներ

- Եթե նյութը ծավալուն չէ, կարող եք քննարկումից հետո մեկ անգամ ևս դիտել. երկրորդ անգամ դիտելիս ուսանողները ուշադրություն կդարձնեն այնպիսի փաստերի վրա, որոնք առաջին անգամ չեն նկատել:
- Առաջարկե՛ք ուսանողներին փնտրել և գտնել նմանատիպ տեսահոլովակներ և հետագա հանդիպումների ժամանակ հնարավորությունն տվեք նրանց ներկայացնելու հոլովակը (ինքներդ նախապես դիտե՛ք և ծանոթացե՛ք նյութին):

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Քննարկումներ» (էջ 40), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (էջ 43) բաժինները:

Բանավեճ

Ընդհանուր նկարագիրը

Բանավեճը համարվում է քննադատական, վերլուծական մտածողության ձևավորման ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: Ուսանողի համար առավել բարդ է այն իրավիճակը, երբ ստիպված է լինում հակառակվել իր սեփական համոզմունքներին, հիմնավորել գաղափարներ, կարծիքներ, որոնց հետ իրականում համաձայն չէ և ավելի հեշտությամբ կհիմնավորեր հակառակ տեսակետը: Բանավեճը հնարավորություն է ստեղծում քննարկմանը մասնակից դարձնելու հնարավորինս շատ ուսանողների:

Ընթացքը

1 Զարգացրե՛ք քննարկման այնպիսի թեմա, որի շուրջ կարծիքները կտրուկ տարբերվում են, և այդ տարբերությունները հավասարապես հիմնավորելի են: Օրինակ՝ բիզնեսի առաջնային խնդիրներից է կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և ոչ մեծ շահույթի ստացումը:

2 Բաժանե՛ք լսարանը երկու հավասար մասերի՝ դեմ և կողմ: Եթե ուսանողը հայտնվել է կողմ խմբում, պետք է պաշտպանի այդ խմբի դիրքորոշումը՝ անկախ իր համոզմունքներից:

3 Այնուհետև այդ երկու խմբերը նույնպես բաժանե՛ք ենթախմբերի. 24 ուսանողից բաղկացած լսարանում, օրինակ, կարող եք ձևավորել երեքական կողմ և դեմ թիմեր:

4 Ենթախմբերին հանձնարարե՛ք քննարկել և նշել իրենց դիրքորոշմանը համապատասխան հիմնավորումներ և թիմից ընտրել մեկին, ով պետք է ներկայացնի փաստարկները:

5 Ներկայացնողների թվին համապատասխան՝ աթոռները տեղադրե՛ք այնպես, որ երկու հակառակորդ թիմերը նստեն դեմ դիմաց: Եթե լսարանը հարմարավետ է, ներկայացուցիչը կարող է նստել իր թիմի առջևում:

6 Ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռե՛ք հերթով խոսելու իրենց ենթախմբերում ձևավորված հիմնական փաստարկների շուրջ:

7 Երբ բոլոր նախնական փաստարկները ներկայացված լինեն, թիմերին հնարավորությունն տվեք կրկին քննարկելու և գտնելու արդեն հնչած փաստարկներին համապատասխան հակափաստարկներ: Ցանկալի է, որ երկրորդ փուլում թիմերը ընտրեն նոր ներկայացուցիչներ:

8 Թիմերի անդամներին տեղեկացրե՛ք, որ եթե ընթացքում նոր գաղափարներ, հակափաստարկներ առաջանան, կարող են գրավոր նշել և փոխանցել իրենց թիմի ներկայացուցչին: Բանավեճի ընթացքում թիմակիցները կարող են նաև ողջունել, ծափահարել, ոգևորել իրենց թիմը պատվով ներկայացնողներին:

9 Բանավեճի վերջում, հաղթողների և պարտվողների բաժանելու փոխարեն, խնդրե՛ք բոլոր մասնակիցներին նստել շրջանաձև (եթե լսարանը ընձեռում է այդ հնարավորությունը)՝ փորձելով ընդդիմախոսներին նստեցնել կողք կողքի: Եթե քննարկման ընթացքում առաջացել են սուր բախումներ, փորձե՛ք հարթել դրանք: Ամփոփման ժամանակ խնդրեք ուսանողներին մեկ անգամ ևս ներկայացնել այն փաստարկները, որոնք համարեցին առավել հիմնավոր:

Այլ գաղափարներ

1 Յուրաքանչյուր թիմի ներկայացուցչի կողքին դրեք ևս մեկ աթոռ և տեղեկացրե՛ք ուսանողներին, որ ընթացքում կարող են միանալ քննարկմանը, եթե նոր փաստարկներ կամ գաղափարներ ծագեն: Սակայն նույն ուսանողը չի կարող քննարկման ողջ ընթացքում կբաղեցնել այդ աթոռը. իր մտքերն արտահայտելուց հետո պետք է այն վիջի ընկերներին:

2 Քննարկման ընթացքում անսպասելիորեն փոխե՛ք դերերը:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դերային խաղեր» (էջ 48), «Քննարկումներ» (էջ 40) բաժինները:

Ուսումնառությունը սկսվում է հարցադրումից

Ընդհանուր նկարագիրը

Դասավանդման ընթացքում ուսանողի դերը մեծացնելուն և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելուն է ուղղված ուսանողների հարցադրումների հենքով ձևավորված դասավանդումը, երբ նվազագույնի է հասցվում դասավանդողի դերը: Այս պարագայում ուսանողը, առանց նախապես դասախոսություն լսելու, կարողանում է ինքնուրույն բացահայտել թեման և գտնել իր հարցերի ճիշտ պատասխանները:

Ընթացքը

1 Ուսանողներին ներկայացրե՛ք նոր նյութը, որը կարող է լինել նախապես տպագրված ձեր դասախոսությունը, հատվածներ գրականությունից, դիագրամներ և այլն: Հիշե՛ք, որ աշխատանքի հիմնական նպատակն է ուսանողի հետաքրքրությունը շարժելը, ինչին դժվար կլինի հասնել, եթե նյութը լինի ծավալուն և չափազանց մանրամասն:

2 Խնդրե՛ք ուսանողներին կույգային կամ թիմային աշխատանքի միջոցով գտնել բոլոր անհասկանալի հատվածները՝ հարցական նշաններ դնելով համապատասխան տեղերում:

3 Երբ բոլորը լսարանում պատրաստ լինեն, հարցերի տրամաբանական շարքին արձագանքելով՝ ներկայացրե՛ք նախատեսված նյութը. հարցերին պատասխանե՛ք հերթականությամբ կամ խոսե՛ք՝ ընթացքում անդրադառնալով բոլոր հարցերին: Այս պարագայում, փաստորեն, դուք դասավանդում եք հարցերի պատասխաններով՝ նախապես նյութը ներկայացնելու փոխարեն, ինչը նպաստում է ուսանողների փոխներգործուն մասնակցությանը:

Այլ գաղափարներ

- Աշխատանքը կարող եք սկսել որպես անհատական առաջադրանք, որը դասաժամի ընթացքում կվերածեք կույգային կամ թիմային աշխատանքի:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դասախոսություններ» (էջ 39), «Քննարկումներ» (էջ 40) բաժինները:

Ուսանողը որպես «բլոգեր»

Ընդհանուր նկարագիրը

Ստորև ներկայացվող մեթոդի հիմքում ընկած է բլոգի ստեղծումը, ինչի արդյունքում հնարավոր է.

- նպաստել ուսանողի համակարգչային գիտելիքների վարգացմանը, մասամբ ծանոթացնել սոցիալական մեդիայի միջոցներին,
- վարգացնել սեփական կարծիքն ապատ արտահայտելու կարողություն, ինչպես նաև ստեղծագործական, քննադատական, վերլուծական մտածողություն,
- սովորեցնել առավել հիմնավոր կերպով անդրադառնալ կարդացած նյութին, ստացած տեղեկատվությանը՝ այն վերածելով հիմնարար գիտելիքի,
- նպաստել ուսանողի անհատականության ձևավորմանը, մեծացնել ինքնարտահայտման հնարավորությունները:

Բլոգը ինտերնետային կայքի տեսակ է կամ որևէ կայքի մաս: Այն հնարավորություն է ընձեռում ստեղծելու ինտերակցիա նյութը տեղադրողի և ընթերցողի միջև, տալիս է հետադարձ կապի հնարավորություն: Ի տարբերություն բարդ կայքերի՝ բլոգ կարող են ստեղծել նույնիսկ համակարգչային նվազագույն գիտելիքներ ունեցողները և այն օգտագործել որպես սեփական կարծիքը, փորձը կամ, ընդհանրապես, տեղեկատվությունը փոխանցելու արդյունավետ միջոց: Աշխարհում առավել տարածված անվճար բլոգներից են Blogger-ը (**www.blogger.com**) կամ Wordpress-ը (**www.wordpress.com**), որոնցից կարող եք մանրամասն տեղեկանալ բլոգ ստեղծելու մասինև գրանցվելով՝ ծանոթանալ բոլոր տեխնիկական հնարավորություններին ու խնդիրներին:

Ընթացքը

1. Մինչև ուսումնական տարվա սկիզբը գրանցե՛ք Ձեր սեփական բլոգը և մանրամասն ծանոթացե՛ք տեխնիկական հնարավորություններին, խնդիրներին, որպեսզի ուսումնական տարվա ընթացքում պատրաստ լինեք աջակցելու և ուղղորդելու ուսանողներին:
2. Ուսանողներին տվե՛ք դասընթացի հիմնական թեմաները և խնդրե՛ք, որ յուրաքանչյուրն ընտրի մեկ թեմա:
3. Ուսանողներին հանձնարարե՛ք գրանցել իրենց սեփական բլոգը և հասցեն տրամադրել Ձեզ:
4. Ուսանողներին հանձնարարե՛ք հետապոտել իրենց տրված թեման և գրառումներ կատարել սեփական բլոգում:
5. Ուսանողներին տրամադրե՛ք բլոգային գրառումների գնահատման հստակ չափանիշներ, ինչպես նաև նշե՛ք գնահատման ենթակա գրառումների նվազագույն քանակը, բառային սահմանափակումները, բացատրե՛ք հղումներ կատարելու ձևը և այլն:

6 Հանձնարարե՛ք այցելել առնվազն երկու համակուրսեցիների բլոգները (թիվը կարող է տատանվել ըստ ուսանողների քանակի) և ընկերոջ բլոգում կարծիք թողնել գրառումների վերաբերյալ:

7 Շահագրգռե՛ք, որ ուսանողները բլոգում տեսական տեղեկատվությունից վատ ունենան նաև սեփական վերլուծություններ, թեմային առնչվող նորություններ, օրինակներ, տեսահոլովակներ, ձայնահոլովակներ, նկարներ, փաստաթղթեր և այլն:

Այլ գաղափարներ

- Սկզբնական աշխատանքները կազմակերպելիս ուսանողները կունենան բազում հարցեր, որոնց պետք է պատրաստ լինեք պատասխանելու: Այնուհետև ուսանողներն իրենք կկարողանան կողմնորոշվել և գտնել իրենց հարցերի պատասխանները: Կարող եք նաև ընտրել մի քանի ուսանողների, ովքեր առավել հմտորեն են տիրապետում համակարգչին և կարող են ընթացքում հանդես գալ որպես օգնական, «փորձագետ»:
- Հրավիրե՛ք մասնագետի, ով կարող է սովորեցնել բլոգ գրանցելու, վարելու հիմնական սկզբունքները, այցելուներ հրավիրելու և այցելուների քանակը մեծացնելու հնարքները, ինչպես նաև կարող է սեփական օրինակով (սեփական բլոգը ներկայացնելու միջոցով) ուղղորդել ուսանողներին՝ հանձնարարությանը վերաբերվելու ոչ թե պարզապես գնահատման ենթակա մի աշխատանքի, այլ որպես հաճելի զբաղմունքի և գաղափարների տարածման միջոցի:
- Տարեվերջին ուսանողները կարող են լսարանում ներկայացնել իրենց ձևավորած բլոգի հիմնական հնարավորությունները, պարունակվող տեղեկատվությունը, առավելությունները: Կարող եք նաև միայն լավագույններին հնարավորություն տալ ներկայացնելու իրենց բլոգները:
- Անհատական աշխատանքը կարող եք վերածել թիմային աշխատանքի, այսինքն՝ ուսանողները խմբով կարող են բլոգ ստեղծելու յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Քննարկումներ» (էջ 40), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (էջ 43) բաժինները:

Դասավանդողը որպես «բլոգեր» (blogger)

Ընդհանուր նկարագիրը

Ի տարբերություն նախորդ մեթոդի՝ ըստ որի ուսանողներն իրենք անհատապես կամ խմբով պետք է գրանցեին և պահպանեին բլոգը, այս պարագայում դերերը փոխվում են, և հիմնական նախաձեռնողը դառնում է դասավանդողը: Այս դեպքում ստեղծվում է մեկ բլոգ, դասավանդողը կարողանում է քննարկումներն ու կարծիքների փոխանակումը կենտրոնացնել մեկ բլոգում, և առավել վերահսկելի է դառնում ողջ ընթացքը:

Ընթացքը

1. Մինչև ուսումնական տարվա սկիզբը գրանցե՛ք Ձեր սեփական բլոգը՝ մենյուն (գլխավոր ցանկը) հարմարեցնելով դասընթացի կրթական նպատակներին և Ձեր դասավանդման մեթոդներին: Մենյուն կարող է ներառել, օրինակ, հետևյալ բաժինները. դասընթացի նպատակները, հետաքրքիր հոդվածներ և հղումներ, քննարկումներ (որտեղ ուսանողները պետք է արձագանքեն դասախոսի կամ այլ ուսանողների կողմից առաջարկվող թեմաներին), գնահատականներ, գրականության ցանկ, տեսադարան, ձայնադարան և այլն:
2. Առարկայական ծրագրի համապատասխան բաժնում (առաջադրանքներ) ուսանողներին ներկայացրե՛ք ձեր սպասումները, օբյեկտիվ գնահատման չափանիշները՝ հավաստելով, որ բլոգային քննարկումները դասընթացի անբաժան մասն են կազմելու:
3. Ուսանողներին բլոգի ակտիվ մասնակիցներ դարձնելու նպատակով փորձե՛ք նախաձեռնել հակասական և հետաքրքիր թեմաների քննարկումներ, առաջ քաշել երկդիմի հարցեր, որոնք կմղեն ուսանողին ազատ, վերլուծաբար և ստեղծագործաբար մտածելու:
4. Որպեսզի դրդեք մասնակցելու բլոգի քննարկումներին, համապատասխան միավորներ նախատեսե՛ք գնահատման համակարգում (այսօր Հայաստանում բուհերից շատերը ակտիվության համար միավորներ են նախատեսում):
5. Անընդհատ թարմացրե՛ք նյութերը, թեմաները, ինչը դրդում է ուսանողներին դասընթացի յուրացման ողջ ընթացքում հետաքրքրություն ցուցաբերել Ձեր առարկայի նկատմամբ:
6. Հետևողականորեն կարդացե՛ք ուսանողների կարծիքները՝ երբեմն համաձայնելով, հակասելով, «մարտահրավերներ» նետելով:

Այլ գաղափարներ

- Բլոգում սեփական կածիք գրելու հնարավորությունը (comment) առաջին անգամ ցույցտվեք ինքներդ: Հաջորդ անգամ ուսանողներից մի քանիսին խնդրե՛ք ցուցադրել կարծիք գրելու, նոր նյութ փոխանցելու և տեխնոլոգիայի այլ հնարավորություններ:
- Յուրաքանչյուր դասին տրամադրե՛ք այն հասցեն (URL), որտեղ տեղադրել եք հանձնարարությունը, նյութը և քննարկումներին մասնակցելու կանոնների պարզ նկարագիրը, որպեսզի մեծացնեք նոր ուսանողներ ներգրավելու հնարավորությունը:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Քննարկումներ» (էջ 40), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (էջ 43) բաժինները:

Տեղեկատվության որոնում

Ընդհանուր նկարագիրը

Մեթոդը արդյունավետ է նոր նյութ սովորելու համար, որը կարող է լինել ծավալուն, պարունակել բարդ գաղափարներ, դժվարըմբռնելի և դյուրըմբռնելի տերմիններ և հասկացություններ: Մեթոդը կարող է փրկարար ելք դառնալ այն դեպքում, երբ լսարանը պատրաստ չէ սեմինարին: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ ուսանողները կարող են չարաշահել լսարանում նյութը սերտելու հնարավորությունը և անպատրաստ ներկայանալը դարձնել համատարած երևույթ: Խնդիրը վերացնելու միջոց կարող է լինել գնահատման չափանիշների և դասավանդման մեթոդների վուգակցումը:

Ընթացքը

1. Նախապես մշակե՛ք հարցաշար, որին հնարավոր կլինի պատասխանել բացառապես Ձեր կողմից տրված նյութերի (բաժանվող նյութեր, իրական փաստաթղթեր, դասագիրք, հոդված և այլն) հիման վրա:
2. Ուսանողներին բաժանե՛ք խմբերի՝ նրանց տրամադրելով հարցաշարը: Կարող եք ստեղծել մրցակցային փոքրիկ պայքար՝ թիմերին տալով նույն հարցադրումները և ժամանակային սահմանափակում դնելով:
3. Պատասխանները քննարկե՛ք միասին՝ փորձելով համակարգել տարբեր թիմերից ստացած արձագանքները և ընդգծել կարևոր գաղափարները:

Այլ գաղափարներ

1. Պատրաստե՛ք այնպիսի հարցադրումներ, որոնց կարելի է պատասխանել՝ տրամադրված տեղեկատվությունը վերլուծելով:
2. Պատրաստե՛ք վիճահարույց հարցեր, ստեղծագործական լուծումներ պահանջող խնդիրներ:

Առավելություններ, սահմանափակումներ, արդյունավետության բարձրացման հնարավորություններ

Տե՛ս «Դասախոսություններ» (էջ 39), «Քննարկումներ» (էջ 40) բաժինները:

Դասախոսակենտրոն ուսուցում

Ուսանողակենտրոն դասավանդման անդյունքում ուսանողն ինքն է ձևավորում և բացահայտում գիտելիքը. տարբերվում են ուսումնառության հետագծերը:

Ուսանողակենտրոն ուսուցում

4

Հետադարձ կապի ապահովում և գնահատում

Գնահատումը դասավանդման գործընթացում

Գնահատումը դասընթացի շրջանակներում ուսանողի առաջադիմության բացահայտման և չափման գործընթացն է, որի նպատակն է շահադրդել ուսանողներին՝ հասնելու դասընթացի կրթական արդյունքներին:

Դասընթացի շրջանակներում ձևակերպված նպատակները, խնդիրները և դրանցից բխող կրթական ելքային արդյունքները փոխլրացնող են, իսկ գնահատման համակարգը՝ պետք է ուղղորդի այդ գործընթացը: **Արդյունավետ գնահատումը անհրաժեշտ է ուղղակիորեն կապել կրթական արդյունքների հետ:** Ուստի, ստուգումների և գնահատման նպատակով տրվող հանձնարարությունները պետք է տրամաբանորեն հանգեցնեն ցանկալի արդյունքին:

Գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք հետևյալ սկզբունքները.

1. Գնահատման համակարգը պետք է հիմնվի տվյալ դասընթացին համահունչ կրթական արժեքների վրա՝ ըստ այդ արժեքներին տրվող նախապատվության:

Դասախոսը, ելնելով բուհի, ուսումնական ծրագրի ընդհանուր պահանջներից և իր արժեքային համակարգին հարիր կրթական ելքային արդյունքների համախմբից, դասընթացի շրջանակներում պետք է կառուցի գնահատման համապատասխան համակարգ, որը կհանգեցնի նախասահմանված արդյունքների ձևավորմանը: Այսպես՝ արժեքային համախմբում որոշ դասախոսներ կարող են նախապատվությունը տալ թիմում աշխատելու կարողությանը, մյուսները՝ քննադատական մտածողությանը, երրորդները՝ ստեղծագործական մտածելակերպին և այլն:

2. Գնահատումը պետք է բխի ուսումնառության բավմակողմանի և համալիր գործընթացից:

Ուսումնառության արդյունքում ուսանողը ոչ միայն վարգացնում է «գիտելիք, հմտություն, կարողություն» եռյակը, այլև ձեռք է բերում նոր աշխարհայացք, այլ արժեքներ, որոնք նպաստում են ուսանողի ակադեմիական շարունակական առաջադիմությանը, ինչպես նաև պայմանավորում նրա արտալսարանային գործունեությունը: Ուստի, արդյունավետ և բավմակողմանի գնահատումը պետք է հիմնվի գնահատման մեթոդների բավմականության վրա՝ և՛ առաջադիմության մակարդակը ճշտելու, և՛ նոր արժեքներ վարգացնելու համար: Օրինակ՝ գնահատման միջոցով դասախոսը կարող է իր անհանդուրժողական վերաբերմունքն արտահայտել

այնպիսի անցանկալի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են մասնագիտական էթիկայի խախտումները, անազնվությունը, գրագողությունը և այլն:

3. Գնահատումը պետք է լինի ամբողջի մի մասը, ոչ թե առանձին ամբողջություն:

Գնահատումը պետք լրացնի և միավորի դասընթացի կառավարման մյուս գործառույթները: Այսպես՝ գնահատումը մի կողմից պետք է մղի ուսանողին առավելագույնս յուրացնելու դասընթացը, մյուս կողմից՝ ուղղորդի նրա ուսումնառության գործընթացը: Հետևաբար, գնահատումը պետք է կատարվի ոչ միայն վերջնական փուլում, այլև ամբողջ դասընթացի շրջանակներում:

4. Ցանկալի է, որ գնահատման հիմքը լինի ուսանողի գիտակցված վերաբերմունքը գիտելիքի օգտակարության և կիրառելիության նկատմամբ:

Ուսումնառության ընթացքում ուսանողը պետք է գիտակցի իր ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կոմպետենցիաների օգտակարությունը և կիրառելիությունը: Դրան պետք է նպաստեն դասավանդման ընթացքում դասախոսի կողմից ընտրվող մեթոդները: Եվ գնահատումը պետք է կատարվի այն տրամաբանությամբ, որ նպատակը ոչ թե ստացած տեղեկատվության պարզունակ վերարտադրությունն է, այլ տեղեկույթը մշակելու, յուրացնելու, նոր գիտելիք ստեղծելու, մեկնաբանելու և կիրառելու կոմպետենտությունը:

5. Գնահատումը պետք է դրական փոփոխությունների խթան լինի:

Գնահատման նշանակությունը մեծանում է, երբ այն ծառայում է դասավանդման և ուսումնառության որակի բարձրացմանը: Քանի որ բուհերի հիմնական նպատակը կրթության որակի շարունակական աճն է, կրթական դաշտի ներկայիս մրցակցային պայմաններում այդ նպատակի իրագործման համար նրանցից շատերը ռազմավարական որոշումներ կայացնելիս հիմք են ընդունում կրթական արդյունքները: Օրինակ, ԵՊՀ-ում փոխատեղում /ռոտացիա/ է կատարվում վճարովի և անվճար հիմունքներով սովորող ուսանողների միջև՝ կախված նրանց առաջադիմության մակարդակից: Արդյունքում փոխվում է գնահատման դերը. այն դառնում է դրական փոփոխությունների խթան:

6. Գնահատելիս դասավանդողները պետք է գիտակցեն իրենց պատասխանատվությունը ուսանողների և հասարակության առջև:

Կրթական հաստատություններում դասավանդողները պատասխանատու են ոչ միայն ուսանողների և նրանց ծնողների, այլև ողջ հասարակության առջև: Այդ պատասխանատվությունը վերաբերում է ինչպես իրենց ստեղծած և փոխանցած գիտելիքի բովանդակությանը, այնպես էլ այդ հասարակության անդամներին կրթելուն և դաստիարակելուն: Գնահատումը պետք է օբյեկտիվորեն արտահայտի այդ իրականությունը, ինչպես նաև բարձրացնի կրթության և գիտելիքի դերը հասարակության մեջ:

Ինչպե՞ս բարձրացնել գնահատման արդյունավետությունը

Ի՞նչ անել	Ինչպե՞ս անել
Ապահովե՛ք կապը դասընթացի, թեմաների, գնահատման և կրթական արդյունքերի միջև:	Հիշե՛ք, որ երբ դասախոսը քննարկում է առանձին թեմա, ուսանողը փորձում է կապել այն ամբողջ դասընթացի տրամաբանական շղթայի հետ և երբեմն դժվարանում է: Ուստի պարզաբանե՛ք առանձին թեմաների և ամբողջ դասընթացի հարաբերակցությունը կրթական ակնկալվող արդյունքների և գնահատման համակարգի միջև եղած կապերի համատեքստում:
Կառուցե՛ք համալիր գնահատման համակարգ:	Դասընթացի շրջանակներում ուսանողները առաջադիմություն են դրսևորում տարբեր առումներով: Հետևաբար, գնահատումը պետք է նպաստի ուսանողի համալիր հմտությունների ձևավորմանը և չափմանը:
Բացահայտե՛ք ուսանողների նախնական գիտելիքները:	Երբեմն դասընթացի սկզբում անցկացված քննությունն օգնում է դասախոսին ճշտելու ուսանողների նախնական իմացության աստիճանը: Դա նաև հեշտացնում է հետագա առաջադիմության գնահատումը:
Մշակե՛ք համադրելի, փոխպայմանավորված և փոխլրացնող գնահատման ձևեր:	Գնահատումը ենթադրում է համադրելի և համապատասխան մեթոդների կիրառում, որոնց դեպքում ապահովվում է ուսանողի առաջադիմության հնարավորությունը լայն իմաստով, ոչ թե որևէ առանձին առաջադրանքի կատարման հարցում: Հանձնարարության արդյունավետության հարցը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին. ● արդյո՞ք հանձնարարությունը կնպաստի դասընթացի նպատակների իրագործմանը, ● արդյո՞ք հանձնարարությունը հնարավորու-

	թյուն կտա ուսանողին դրսևորվելու և գիտակցելու, որ հենց այդ մեթոդով ինքը հասավ կրթական ցանկալի արդյունքին:
Ձեր լսարանում մշտապես ապահովե՛ք հետադարձ կապ:	Հետադարձ կապը լսարանում գնահատման ամենանշանակալի տարրերից մեկն է, քանի որ այն օգնում է ուսանողներին ավելի լավ կավմակերպելու ուսումնառության հետագա գործընթացը:

Գնահատումը իրականացրե՛ք ուսանողի՝ նյութին տիրապետելու աստիճանի, ոչ թե նրա անձնային հատկանիշների հիման վրա:

Խուսափե՛ք ուսանողների միջև չհիմնավորված, «անառողջ» մրցակցություն ստեղծելուց: Դա կարող է ավելի մեծացնել լարվածությունը՝ հանգեցնելով անբարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

Մի՛ գերարժևորեք գնահատականի դերը, առավել շեշտադրե՛ք ուսման գործընթացը՝ նպաստելով ուսանողների գիտակցության բարձրացմանը:

Ուսանողների հետ քննարկե՛ք նրանց առաջադիմության հետ կապված Ձեր դիտարկումները, իրազեկե՛ք նրանց ընթացիկ գնահատումների արդյունքների մասին:

Ուսանողներին ներկայացրե՛ք գնահատման ընթացակարգը դասընթացի առաջին կամ երկրորդ օրվա ընթացքում:

Խուսափե՛ք ընթացքում գնահատման սկզբունքները փոխելուց, դրանք պետք է հստակ արտացոլված և նախապես սահմանված լինեն առարկայական ծրագրում:

Պահպանե՛ք գնահատականների մասին վկայող բոլոր փաստաթղթերը, լրացրե՛ք դրանք առավելագույն ուշադրությամբ և ճշգրտությամբ:

Եթե գրեթե բոլոր ուսանողները դժվարացել են քննական թեստի միևնույն հարցին պատասխանելիս կամ առհասարակ չեն հասկացել հարցը, վերանայե՛ք թեստը՝ հաջորդ անգամ նման իրավիճակից խուսափելու և ուսանողների դժգոհությունը բացառելու համար: Այդ նպատակով հարցը փոխարինե՛ք մեկ այլ հարցով կամ վերաձևակերպե՛ք, հստակեցրե՛ք այն, կարող եք նաև առանձին ժամանակ հատկացնել՝ անհասկանալի թեմային անդրադառնալու համար:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ՌՈՒԲՐԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ռուբրիկը կարելի է սահմանել որպես գնահատման գործիք, որի միջոցով հնարավոր է նվազեցնել գնահատման կողմնակալությունն ու անճշտությունները՝ նախապես հստակեցնելով ակնկալիքները: Առաջադրանքի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի համար կարելի է ռուբրիկի միջոցով ամփոփ ներկայացնել գնահատման ընդունելի կամ անընդունելի չափանիշները: Ռուբրիկների կիրառումը դյուրին է դարձնում մեծ թվով առաջադրանքների և հանձնարարությունների գնահատումը, այդ թվում՝ հետազոտական աշխատանքների, կուրսային աշխատանքների և ռեֆերատների, մասնակցություն քննարկումներին, լաբորատոր աշխատանքների վերաբերյալ վեկույցների, խմբային աշխատանքների, համակարգչային նյութերի ուղեկցությամբ ելույթների և այլն:

Ռուբրիկներ կիրառողները նոր ռուբրիկներ կազմելիս ընդամենը ձևափոխում են նախորդը՝ համապատասխանեցնելով նոր առաջադրանքին, ինչը հնարավորություն է տալիս խնայել ժամանակը: Սակայն սկսնակների համար դա կարող է բավականին աշխատատար լինել: Այնուամենայնիվ, այդ ժամանակը վուր չի վատնվում, քանի որ մեկ ռուբրիկի կազմումը հետագայում խնայում է գնահատմանը հատկացված ժամանակը և ավելի ընդգրկուն հետադարձ կապ ապահովում, ինչպես նաև դրականորեն անդրադառնում դասերին նախապատրաստվելու և դասավանդման արդյունավետության վրա:

Առաջադրանքի գնահատման չափանիշները սահմանելիս անհրաժեշտ է հստակեցնել ակնկալվող և ցանկալի կրթական ելքային արդյունքները. չափանիշները պետք է ամբողջությամբ բխեն դասընթացի սկզբում առաջ քաշված նպատակներից և խնդիրներից:

ԻՆՉՈՒ՞ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՌՈՒԲՐԻԿՆԵՐ

Ռուբրիկների օգտագործումը դասավանդողների կողմից հայաստանյան բուհական համակարգում այդքան էլ տարածված չէ, ուստի փորձենք հիմնավորել դրանց օգտագործման առավելությունները:

- **Ժամանակին հետադարձ կապի ապահովում**

  Ուսանողներից շատերի համար կարևոր է հնարավորինս շուտ իրենց գնահատականն իմանալը, իսկ հետադարձ կապ ստանալը այնքան էլ հրատապ չէ նրանց համար: Սակայն ոմանք ցանկանում են բավականաչափ արագ պարզել գնահատականի հիմքում ընկած բացթողումները, հասկանալ սխալները՝ հետագայում նմանատիպ թերություններից խուսափելու, ինչպես նաև ուսումնառության որակն անընդհատ կատարելագործելու համար: Որոշ հետազոտողների կարծիքով՝ որքան ուշ է ուսա-

նողներին տրվում հետադարձ կապը, այնքան ավելի է փոքրանում նրանց առաջադիմության հնարավորությունը (Ilgen, Peterson, 1981): Անշուշտ, այստեղ հարց է ծագում, թե ինչպես կարող ենք կարճ ժամանակահատվածում ուսանողների համար այնպիսի հետադարձ կապ ապահովել, որը լինի նաև բովանդակային առումով հագեցած և մանրամասն: Այդ հնարավորությունը ընձեռում են ռուբրիկները:

- **Հետադարձ կապ ապահովելու փորձառության տարածում**

Բրիկոյի (1993) կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսանողներին տրված հետադարձ կապն ավելի լավ է ծառայում իր նպատակին, երբ մեծ քանակությամբ տեղեկություններ է պարունակում աշխատանքի կատարման որակի մասին, քան երբ աշխատանքը պարզապես գնահատված է լինում: Ուսանողներին նախապես ներկայացնելով տարբեր մակարդակների գնահատման չափանիշները՝ նրանց հնարավորություն ենք տալիս հասկանալու իրենց ուժեղ և թույլ կողմերը: Իսկ երբ հետադարձ կապն ապահովելիս և գնահատելիս նշում ենք միայն բացթողումները և սխալները, սովորողը պատկերացում չի կազմում, թե ինչ ասել է առավել բարձր առաջադիմություն, և թե իրականում ինչպես էր անհրաժեշտ կատարել հանձնարարությունը՝ ավելի բարձր գնահատական ստանալու համար:

Երբեմն ուսանողի ընդհանուր կատարողական մակարդակն ավելի է լավանում, սակայն թվանշանային առումով գնահատականը մնում է նույնը, և ուսանողը չի հասկանում դրա պատճառը: Այս պարագայում նույնպես կարելի է ռուբրիկներում կատարված նշումների օգնությամբ հիմնավորել գնահատականը: Ռուբրիկների կիրառության արդյունավետությունն ավելի է բարձրանում, երբ մի քանի դասախոսներ վուգահեռաբար կիրառում են գնահատման այս մեթոդը: Այս պարագայում ուսանողը, նույն խնդիրներին հանդիպելով տարբեր դասախոսների կողմից ներկայացվող պահանջներում, առավել արագ է արձագանքում և գիտակցում իր բացթողումները:

- **Քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության զարգացում**

Ռուբրիկները նպաստում են ուսանողի ինքնագնահատման կարողությունների զարգացմանն ու ինքնակատարելագործմանը, զարգացնում ինքնուրույն մտածելու, պատճառաբանելու և հիմնավորելու, տվյալները հավաքագրելու և ցանկացած նոր առաջադրանքի նորովի մոտենալու կարողություններ (Huba, Freed, 2002):

Այսօր շատ դասավանդողներ ուսանողների գիտելիքների պաշարը ստուգելու նպատակով ընտրում են ավելի արագ կազմակերպվող ստուգման ձևեր, օրինակ՝ թեստեր և կարճ պատասխաններ ենթադրող հարցաշարեր: Այդ պարագայում, անշուշտ, գնահատումը շատ կարճ է տևում, սակայն արդյունքում հետին պլան են մղվում ուսանողի՝ ինքնուրույն մտածելու, խնդիրներին ստեղծագործաբար մոտենալու կարողությունները (Huba, Freed, 2000):

Ռուբրիկներն ընձեռում են մեծածավալ առաջադրանքներն արագ գնահատելու հնարավորություն՝ նպաստելով քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության զարգացմանը: Կարևոր են նաև կապակցված և գրագետ խոսքը, արդյունքները բանավոր և գրավոր ներկայացնելու հմտությունները և այլն: Դասախոսը, նախապես սահմանելով կրթական ելքային արդյունքները և արժևորելով յուրաքանչյուր հմտության, կարողության կարևորությունը տվյալ դասընթացի համար, գնահատման համակարգում տոկոսային արժեքներով տարբերակում է դրանք:

- **Դասավանդման գործընթացի մասնակիցների միջև համագործակցության ապահովում**

  Երբ դասավանդման գործընթացն իրականացվում է այլ դասավանդողների հետ համագործակցված (օրինակ՝ գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքներ վարողների հետ), անհրաժեշտ է ապահովել ակնկալիքների միատարրություն, գնահատման չափանիշների միատիպություն. հակառակ դեպքում, կրկնապատկվում է սուբյեկտիվ մոտեցման հնարավորությունը: Նպատակահարմար է ռուբրիկի կազմմանը ներգրավել դասավանդման ընթացքի այլ մասնակիցների կամ նախապես մանրամասն ներկայացնել ռուբրիկի բաղկացուցիչ մասերն ու գնահատման չափանիշները:

- **Դասավանդման հմտությունների կատարելագործում**

  Ռուբրիկը անուղղակիորեն դուրս է բերում նաև դասավանդողի թերացումները և թույլ կողմերը: Ռուբրիկների միջոցով արդյունքներն ամփոփելիս բավականին հեշտ է վերլուծել ուսանողների կողմից թույլ տված առավել տարածված սխալները, ինչն ապդակ կարող է լինել դասավանդողի համար: Օրինակ՝ այսօր շատ է խոսվում ուսանողների՝ ճիշտ հղումներ կատարելու հմտության բացակայության մասին, ինչը ոչ թե ուսանողների, այլ դասավանդողի թերացումը կարող է լինել:

Ռուբրիկի բաղկացուցիչները կամ մասերը

Ռուբրիկները բաղկացած են մի քանի հիմնական մասերից, որոնցում դասավանդողը սահմանում է առաջադրանքի չափման ձևերը (այսուհետ՝ մեծությունները): Ռուբրիկները կարող են և պետք է տարբերվեն, սակայն հիմնական ձևաչափը մնում է նույնը: Ամենատարրական ձևն ընդգրկում է հանձնարարության նկարագրությունը, որոշակի սանդղակ (կարող է լինել գնահատման միավորների սանդղակ), առաջադրանքի մեծությունները (առաջադրանքում ընդգրկված հմտությունների/գիտելիքների խմբերը) և իրականացման յուրաքանչյուր մակարդակի նկարագրությունը (մակարդակները մատնանշում են առաջադրանքները կատարելու ամենավատ արդյունքից մինչև գերազանց արդյունքը), որոնք ներկայացված են հետևյալ աղյուսակով.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Մեծություն 1			
Մեծություն 2			
Մեծություն 3			
Մեծություն 4			

Սա ռուբրիկի աղյուսակի ամենաընդհանուր ձևն է, բայց այն կարող է նաև բաղկացած լինել 4-ից ավելի մեծություններից և 3-ից ավելի մակարդակներից. հավելված 1և 2-ում ներկայացված են նմանատիպ ռուբրիկների օրինակներ:

Ակնկալիքները և պահանջները հստակեցնելու նպատակով ԱՆՀՐԱԺԵՇՏ է ՈՒՍԱՆՈՂԻՆ ՆԱԽԱՊԵՍ ՏՐԱՄԱԴՐԵԼ գնահատման ընտրված տարբերակի մանրակրկիտ չափորոշիչ-ները. օրինակ՝ ելույթ ունենալու կարողությունը գնահատելու համար նախապես բավմացնել և բաժանել հավելված 1-ում ներկայացված ռուբրիկը, իսկ գրավոր աշխատանքները գնահա-տելուց առաջ՝ հավելված 3-ում ներկայացված:

Մաս 1. Հանձնարարության նկարագրություն

Աղյուսակի վերևում հստակ նկարագրվում է այն հանձնարարությունը, որը դասավանդողը նախատեսում է գնահատել ռուբրիկի միջոցով: Դասընթացը կարող է ներառել տարբեր հանձնարարություններ, և ամենևին պարտադիր չէ բոլոր հանձնարարությունները գնահատել ռուբրիկների միջոցով: Հանձնարարությունների գնահատման համակարգը ձևավորելիս դասավանդողը պետք է գնահատի նաև այլընտրանքային տարբեր մոտեցումների կիրառման նպատակահարմարությունը:

Օրինակ՝
Առաջադրանքի անվանումը
Պահանջարկի և առաջարկի տեսություններ

Առաջադրանքի նկարագրությունը

- Ընտրե՛ք որևէ ապրանք (ծառայություն) և ընտրված ապրանքի վերաբերյալ 500 բառի սահմանում գրե՛ք վերլուծություն:

  Աշխատանքը պետք է ներառի.
  – առաջարկի կորի վրա ազդող գործոնների վերլուծություն,
  – պահանջարկի կորի վրա ազդող գործոնների վերլուծություն,
  – պահանջարկի առաձգականության վերաբերյալ վերլուծություն:

Մաս 2. Սանդղակ

Ռուբրիկը պետք է ներառի սանդղակ, որը ամփոփում է կրթական ելքային արդյունքների և տարբեր մեծությունների գնահատման մակարդակները.

Օրինակ.

1. գերազանց, լավ, բավարար, անբավարար,
2. 1, 2, 3, 4 կամ 10, 20, 30, 40 (ներկայացվում է թվային տեսքով),
3. տիրապետում է, մասամբ է տիրապետում, չի տիրապետում
4. բարձր մակարդակ, միջին մակարդակ, ցածր մակարդակ

	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
Մեծություն 1				
Մեծություն 2				
Մեծություն 3				
Մեծություն 4				

Մաս 3. Մեծություններ

Ռուբրիկի մեծությունները բխում են հանձնարարության բաղկացուցիչ մասերից: Ռուբրիկը կարող է ուսանողին պատկերացում տալ, թե հանձնարարությունը ինչ մասերից է բաղկացած, այդ մասերից որոնք են կարևոր և յուրաքանչյուրին ինչ գնահատական է տրված: Մեծությունները հարմարեցվում և սահմանվում են՝ ելնելով առարկայի և առաջադրանքի առանձնահատկություններից, դասընթացի նպատակներից և խնդիրներից: Մեծությունների օրինակներ են՝ գրագիտություն, վերլուծելու կարողություն, բովանդակայնություն, հետազոտման տեխնիկա, լսարանի առջև ելույթ ունենալու հմտություն, հղումների կատարում, մասնակցություն թիմային աշխատանքին և այլն:

Մաս 4. Մեծությունների նկարագրությունը, գնահատման չափանիշները

Յուրաքանչյուր մնծությանը և գնահատման տարբեր մակարդակներին համապատասխան անհրաժեշտ է առանձնացնել չափանիշներ կամ նկարագրություն: Երբեմն նշում են միայն ամենաբարձր (օրինակ գերազանց) մակարդակին համապատասխանող չափանիշները, ինչն էլ հիմք է ընդունվում համեմատության և մյուս գնահատականների որոշման համար: Ռուբրիկների այս տիպը կոչվում է ուղղորդող *(տե՛ս Աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2.

Մեծություն	Բարձր մակարդակի չափանիշներ	Մեկնաբա-նություն	Մեկնաբա-նություն
Գիտելիք (40%)	Ելույթը ընդգրկում է տեսական և գործնական հարուստ տեղեկատվություն, բոլոր փաստարկները հիմնավոր են, ընդգրկված են թեմայի հիմնական գաղափարները:	Մեկնաբա-նություն	Մեկնաբա-նություն
Մեկնաբանություններ և պատասխաններ հարցադրումներին (30%)	Ներկայացնողը հարցադրումներին պատասխանում է՝ խորությամբ վերլուծելով, փաստարկներով հիմնա-շվորելով իր խոսքը, և տալիս է սպառիչ պատասխաններ:		
Տեսողական օժանդակ նյութերի կիրառումը (20%)	Ելույթն ընդգրկում է համապատասխան և դյուրըմբռնելի տեսողական օժանդակ նյութեր, որոնք ելույթ ունեցողը կիրառում է տեղին՝ հղումներ կատա-րելով և մեկնաբանելով:		
Լսարանի առջև ելույթ ունենալու կարողություններ (10%)	Ներկայացնողը խոսում է հստակ և բարձր, լսարանի հետ ապահովում է անընդհատ կապ, կեցվածքը և շարժուձևերը գրավում են ունկնդիրներին:		

Գնահատման ուղղորդող ռուբրիկը դասախոսին որոշ առումներով առավել ճկուն մոտեցում ցուցաբերելու հնարավորություն է ընձեռում, սակայն ուսանողի բացթողումները գրավոր բա-ցատրելու համար առավել մեծ ժամանակ է պահանջվում:

Շատ հանձնարարությունների համար ավելի նախընտրելի է կիրառել այնպիսի ռուբրիկ, որը պարունակում է առնվազն երեք մակարդակ և բոլոր մակարդակի պահանջները բավարարելու համար ուսանողին անհրաժեշտ ընդհանուր չափանիշները *(տե՛ս աղյուսակ 3):*

Աղյուսակ 3.

Մեծություն	Մակարդակ (տարբեր մակարդակների չափանիշներ)		
	Գերազանց	Լավ	Բավարար
Գիտելիք (40%)	Ելույթն ընդգրկում է տեսական և գործնական հարուստ տեղեկատվություն, բոլոր փաստարկները հիմնավոր են, ընդգրկված են թեմայի հիմնական գաղափարները:	Ընդհանուր առմամբ՝ ելույթն ընդգրկում է տեսական և գործնական տեղեկատվություն, սակայն երբեմն թերի են հիմնավորումները, հիմնահարցերը մասամբ են ներկայացվում:	Միայն մասամբ ներկայացվեց տեղեկատվությունը, գրեթե բացակայում է հիմնավորված խոսքը, թեման ներկայացվեց թերի:
Մեկնաբանություններ և պատասխաններ հարցադրումներին (30%)	Ներկայացնողը հարցադրումներին պատասխանում է՝ խորությամբ վերլուծելով, փաստարկներով հիմնավորելով իր խոսքը, և տալիս է սպառիչ պատասխաններ:	Ներկայացնողը հարցադրումներին պատասխանում է հետևողականորեն, սակայն երբեմն մեկնաբանություններն այնքան էլ համոզիչ չեն:	Ներկայացնողը խուսափում է հարցադրումներից, պատասխանները հիմնավոր չեն:
Տեսողական օժանդակ նյութերի կիրառումը (20%)	Ելույթը ընդգրկում է համապատասխան և դյուրըմբռնելի տեսողական օժանդակ նյութեր, որոնք ելույթ ունեցողը կիրառում է տեղին՝ հղումներ կատարելով և մեկնաբանելով:	Բանավոր խոսքը ուղեկցվում է համապատասխան տեսողական օժանդակ նյութերով, սակայն դրանք շատ սակավաթիվ են: Օժանդակ նյութերը առանձնապես չեն առնչվում ելույթի հետ, ելույթ ունեցողը մոռանում է վուգահեռներ անցկացնել և օգտագործված օժանդակ նյութերին հղումներ կատարել:	Ելույթը չի ուղեկցվում պատկերավոր օժանդակ նյութերով կամ ուղեկցվում է, սակայն ոչ տեղին. ընդգրկված նյութերը քիչ են և խրթին:
Լսարանի առջև ելույթ ունենալու կարողություններ (10%)	Ներկայացնողը խոսում է հստակ և բարձր, լսարանի հետ ապահովում է անընդհատ կապ, կեցվածքը և շարժուձևերը գրավում են ունկնդիրներին:	Ներկայացնողը խոսում է հստակ և բավականաչափ բարձր՝ լսելի լինելու համար, սակայն կապը լսարանի հետ արդյունավետ չէ:	Ներկայացնողը խոսում է ցածր, ներկաները ձանձրանում են և գրեթե ներգրավված չեն, հետևում են ներկայացնողի խոսքին միայն ժամաակ առ ժամանակ: Ոչ մի փորձ չի կատարվում լսարանի հետ կապ ստեղծելու, շարժուձևերի միջոցով լսարանին ցրավելու համար:

Ռուբրիկի այս երկրորդ օրինակում նկարագրությունները բավականին սահմանափակ են, երբ ուսանողը չի համապատասխանում որևիցե չափանիշի, մենք կարող ենք նշել այդ փաստը՝ սյունակի տարրերը շրջանակի մեջ վերցնելով:

Ռուբրիկ կազմելու երեք հիմնական փուլերը

Ցանկացած բարդության ռուբրիկ կազմելու գործընթացում առկա են երեք հիմնական փուլեր.

1 **Անդրադարձ**.

- ճշտվում են ուսանողներից ունեցած հիմնական ակնկալիքները,
- վեր են հանվում ընդհանուր խնդիրները, որոնց լուծման նպատակով է կազմվում տվյալ առաջադրանքը:

2 **Թվարկում**
.

- նշվում են ընդհանուր և մասնագիտական հմտություններն ու կարողությունները, որոնք նպատակաուղղված ենք վարգացնելու տվյալ առաջադրանքի միջոցով,
- նշվում են մյուս կրթական ելքային արդյունքները:

3 **Խմբավորում և անվանում.**

- առաջին և երկրորդ փուլերի արդյունքները համախմբում ենք և վերածում տարբեր մեծությունների,
- մեծությունները նկարագրում ենք և դուրս բերում հստակ չափանիշներ:

Այժմ ավելի մանրամասնորեն անդրադառնանք այս փուլերից յուրաքանչյուրին:

Փուլ 1. Անդրադարձ

Առաջին փուլում անդրադառնում ենք ոչ միայն առաջադրանքի, այլ նաև ողջ դասընթացի ուսումնական գլխավոր նպատակներին, որոշակիացնում այն հանձնարարությունները, որոնք նախատեսում ենք այդ նպատակներն իրագործելու համար: Այս փուլում անհրաժեշտ է նաև հաշվի առնել, պարզել ուսանողների բազային գիտելիքների մակարդակը:
Ցանկացած բարդության ռուբրիկ կազմելիս անհրաժեշտ է պատասխանել հետևյալ ուղղորդիչ հարցերին, որոնք երբեմն արհամարհվում են և դուրս մնում ուշադրությունից՝ չափազանց պարզունակ համարվելով:

1 Որո՞նք են առաջադրանքի կազմման գլխավոր նպատակները, խնդիրները: Որո՞նք են նպատակային կրթական ելքային արդյունքները:

2 Արդյո՞ք այս առաջադրանքը կամ նմանատիպ առաջադրանք նախկինում հանձնարարվել է: Եթե այո, որո՞նք են եղել առաջադրանքի վերաբերյալ առավել հաճախակի հանդիպող և ուսանողների կողմից տրվող հարցերը: Արդյո՞ք ընդհանուր արդյունքները գոհացուցիչ են եղել: Եթե ոչ, ի՞նչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել առաջադրանքն ավելի նպատակային դարձնելու համար:

3 Ի՞նչ հմտություններ պետք է ունենան կամ ձևավորեն ուսանողները՝ առաջադրանքը հաջող իրականացնելու համար: Առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ հմտություններն արդեն ձևավորվա՞ծ են, թե՞ նախատեսում եք դրանք ձևավորել իրականացման ընթացքում: Գնահատե՞լ եք ուսանողների ունակությունները և արդյո՞ք նախատեսել եք տարբերակված մոտեցումներ՝ ուսանողների անհավասար ուժերը համադրելու, բացթողումները վերացնելու նպատակով:

4 Որո՞նք են առաջադրանքի հիմնական տարրերը, ունե՞ք արդյոք հստակ ձևակերպված մեթոդական ցուցումներ յուրաքանչյուրի կատարման համար:

5 Ի՞նչ առավելագույն ակնկալիքներ ունեք ուսանողներից, արդյո՞ք դրանք իրատեսական են տվյալ կուրսի, տվյալ մասնագիտությամբ սովորողների համար: Ո՞ր աշխատանքը կհամարեիք բացառիկ և փայլուն:

6 Ո՞րն է առաջադրանքի կատարման նվավագույն արդյունքը Ձեր պատկերացմամբ: Նման առաջադրանք իրականացնելիս ո՞ր մասում են ուսանողները նախկինում անհաջողություն ունեցել: Ինչպե՞ս կարող եք ուսանողներին օգնել խուսափելու այդ խնդիրներից:

Փուլ 2. Թվարկում

Այս փուլում, ելնելով դասընթացի ընդհանուր նպատակներից և խնդիրներից, թվարկում, նշում ենք ակնկալվող կրթական ելքային արդյունքները. ուսանողը տվյալ հանձնարարության կատարման արդյունքում ի՞նչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել: Այնուհետև նշվում են յուրաքանչյուր կրթական արդյունքի հստակ չափանիշները՝ ըստ ընտրված մակարդակների:

Փուլ 3. Խմբավորում և անվանում

Երրորդ՝ խմբավորման և անվանման փուլում դասակարգում ենք միանման արդյունքները և անվանում յուրաքանչյուր խումբը: Այդ խմբերը ձևավորում են ռուբրիկի հիմնական մեծությունները, օրինակ՝ վերլուծությունը, հղումները, ելութը և այլն:

Փուլ 4. Տարբերակում

Վերջին փուլում յուրաքանչյուր խմբի համար սահմանում ենք տարբերակված չափանիշներ՝ ձևավորելով կատարման մակարդակները: Ինչպես արդեն նշվել է, ըստ ընտրված ռուբրիկի ձևի՝ մակարդակների թիվը կարող է տարբերվել, և եթե առկա են մեկից ավելի մակարդակներ, յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է սահմանել գնահատման համապատասխան չափանիշ: Հավելված 1-ում ներկայացված է ռուբրիկ, որը պարունակում է 4 մակարդակ և 5 մեծություն: Հաջորդ՝ 2-րդ հավելվածում, ներկայացված է մեկ այլ ռուբրիկ, որը պարունակում է 3 մակարդակ և 3 մեծություն:

Օրինակ՝ ***«Լսարանի առջև խոսելու» ուսումնական նպատակի համար կարևորագույն ակնկալիքները.***

Չխմբավորված չափանիշներ (փուլ 2)	Խմբավորված չափանիշներ (փուլ 3)
• Բաժանվող նյութերը հստակ են: • Բաժանվող նյութերը արտահայտում են հիմնական խնդիրները և թեմաները: • Բաժանվող նյութերը նպաստում են լսարանի կողմից նյութի ընկալմանը: • Պարբերաբար փոխում է ձայնի որակը և տոնը, խոսքը միալար և ձանձրալի չէ: • Ելույթի մեջ ընդգրկում է հիմնական խնդիրները և թեմաները: • Բանավոր խոսքի ամբողջ ընթացքը կազմակերպված է: • Խոսում է բարձր և բավականաչափ դանդաղ՝ հասկացված լինելու համար: • Օգտագործում է հումոր և պատմություններ՝ թեման ներկայացնելու, հիշարժան դարձնելու, խոսքը հարստացնելու և աշխուժացնելու համար:	**Խումբ1. Բանավոր խոսք** (մեծություն1) • Պարբերաբար փոխում է ձայնի որակը և տոնը, խոսքը միալար և ձանձրալի չէ: • Ելույթի մեջ ընդգրկում է հիմնական խնդիրները և թեմաները: • Խոսում է բարձր և բավականաչափ դանդաղ՝ հասկացված լինելու համար: • Օգտագործում է հումոր և պատմություններ՝ թեման ներկայացնելու, հիշարժան դարձնելու, խոսքը հարստացնելու և աշխուժացնելու համար:
	Խումբ 2. Կազմակերպվածությունը (մեծություն 2) • Բաժանվող նյութերը հստակ են: • Բաժանվող նյութերը արտահայտում են հիմնական խնդիրները և թեմաները: • Բաժանվող նյութերը նպաստում են լսարանի կողմից նյութի ընկալմանը: • Բանավոր խոսքի ամբողջ ընթացքը կազմակերպված է:

Այսպիսով՝ ռուբրիկների կազմումը դյուրին է դարձնում ուսանողների կողմից իրականացված աշխատանքի գնահատումը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում մանրամասն ու ճշգրիտ հետադարձ կապ ապահովելու:

Դ

Հավելվածներ

Հավելված 1.
Ռուբրիկ. գնահատվում է լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունը

	1	2	3	4	Ընդա-մենը
Խոսքի տրամա-բանական կառուց-վածքը	Լսարանը չի կարողանում հասկանալ նյութը, քանի որ մտքերի տրամաբանական հաջորդակա-նություն չկա:	Լսարանը դժվարու-թյամբ է հետե-վում մտքերի ընթացքին, քանի որ խոսքի տրամաբա-նական շղթան հաճախ ընդհատվում է:	Ուսանողի մտքերն աչքի են ընկնում տրամաբանական հաջորդականու-թյամբ, և լսարանը կարողանում է հետևել խոս-քաշարին:	Ուսանողի մտքերն ունեն տրամաբանական կուռ կառուցվածք, հետաքրքիր ընթացք, բերված օրինակները դիպուկ են և ուշագրավ, լսարանը ներգրավված է և հետաքրքրված:	
Առար-կայի իմացու-թյունը	Ուսանողի իմա-ցությունը թերի է, չի կարողանում հարցերին սպառիչ պատասխաններ տալ:	Ուսանողը նյութը լավ չի յուրացրել և կարողանում է պատաս-խանել միայն տարրական հարցերին:	Ուսանողը հեշտությամբ է գտնում բոլոր հարցերի պատասխան-ները, սակայն չի կարողանում հիմնավորել իր պատասխանները:	Ուսանողը ունի հիմնարար գիտելիք-ներ, տալիս է սպառիչ պատասխաններ՝ մեկնաբանությունն-ներով և գաղափա-րական նոր մոտեցումներով:	
Գծա-պատկեր-ները	Ուսանողը չի օգտագործում որևէ տեսողական պատկեր, գծապատկեր, ինչն անհրաժեշտ է նյութը հասկանալի դարձնելու համար:	Ուսանողն օգտագործում է գծապատկեր-ներ, որոնք հավվադեպ են լրացնում տեսքտին և ելույթին:	Ուսանողի ներկայացրած գծապատկերները կապված են տեքստի և ելույթի հետ, սակայն դեռ կարիք կա շտկելու թերի կողմերը:	Ուսանողը մեկնաբանում է գծապատկերները և դրանցով ավելի բովանդակային դարձնում խոսքը: Բոլոր տեսողական պատկերներն արտահայտիչ են և նպաստում են նյութի ընկալմանը:	
Լեզվա-մտածո-ղությունը	Ուսանողը ելույթի ընթաց-քում թույլ տվեց քերականական և (կամ) արտա-սանական չորս և ավելի սխալներ:	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ տվեց քերակա-նական և (կամ) արտասա-նական երեք սխալ:	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ տվեց երկուսից ոչ ավելի քերա-կանական և (կամ) արտասանական սխալներ:	Ուսանողի խոսքը գրագետ էր, չկային քերականական և արտասանական սխալներ:	
Կապը լսարանի հետ	Ուսանողի վեկույցը անկենդան է, բացակայում է կապը լսարանի հետ:	Ուսանողը մեծ մասամբ ընթերցում է վեկույցը, երբեմն-երբեմն փորձում է կապ հաս-տատել լսա-րանի հետ:	Ուսանողը մեծ մասամբ պահպանում է կապը լսարանի հետ, սակայն հաճախ անդ-րադառնում է գրառումներին:	Ուսանողը պահպանում է կապը լսարանի հետ՝ հավվադեպ անդրադառնալով գրառումներին:	

Որքանո՞վ է խոսողը ինքնավստահ: Խոսողը պետք է հեշտությամբ կապ հաստատի լսարանի հետ: Եթե խոսողը անհանգիստ է կամ դյուրագրգիռ, հանդիպումը չի կարող լավ ավարտ ունենալ: Եթե խոսողը հեշտությամբ է կապ հաստատում լսարանի հետ, չի խուսափում հարցերից, հրավիրում է լսարանին մասնակցելու քննարկումներին, և դա անում է անբռնապբոսիկ կերպով, կարելի է ելույթը հաջողված համարել:

Որքանո՞վ է տեղեկությթը որակյալ: Ելույթ ունեցողը պետք է հանգամանալից, բայց ոչ ավելորդ մանրամասնությամբ ներկայացնի նյութը. անկարևոր մանրամասները կարող են շփոթեցնել կամ ձանձրացնել լսարանին:

Որքանո՞վ է խոսքը հասկանալի: Խոսողը պետք է հեշտությամբ ձևակերպի իր մտքերը՝ անթերի և սահուն արտաբերելով բառերը, ունենա հարուստ և մաքուր բառապաշար:

Որքանո՞վ է ելույթը կազմակերպված: Յուրաքանչյուր ելույթ պետք է ունենա որոշակի կառուցվածք և կազմակերպվածություն ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ:

Հավելված 2
Ռուբրիկ. գնահատվում է թիմային ելույթը

	Օրինակելի	Բավարար	Ենթակա է վարգացման
Ելույթ ունենալու կարողու-թյունները	• Ելույթ ունեցողը խոսեց հստակ, դանդաղ և բավականաչափ բարձր, գեղեցիկ առոգանությամբ: • Պահվածքը, շարժումները համապատասխանում էին ելույթի ձևաչափին (պաշտոնական կամ ոչ պաշտոնական): • Արդյունավետ օգտագործվեց ելույթին հատկացված ողջ ժամանակը:	• Նյութը հասկանալի էր, բայց խոսքը՝ ոչ հստակ: • Խոսողի պահվածքը չէր համապատասխանում ելույթի ձևաչափին, սակայն դա էական ազդեցություն չթողեց: • Խոսողը չկարողացավ արդյունավետ օգտագործել ժամանակը, ավարտեց նախատեսված ժամանակից մի փոքր շուտ (կամ ուշ):	• Խոսքը հստակ չէր, լսարանը դժվարությամբ հետևեց ողջ ընթացքին: • Խոսողը հուզված էր, լսարանը դժվարությամբ էր կենտրոնանում նյութի բովանդակության վրա: • Ելույթ ունեցողը չկարողացավ արդյունավետ օգտագործել ժամանակը, ավարտեց բավականին շուտ (կամ ուշ):
Թիմային աշխա-տանքը	• Ելույթ ունեցողը կամ օգնականը լիարժեք օգտվեցին սարքավորումներից: • Ելույթ ունեցողը իր թիմի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն տվեց: • Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին իրար, կապը խզվեց միայն որոշ դեպքերում:	• Թիմում տեղի ունեցավ սխալ դերաբաշխում, սակայն դա մեծ ազդեցություն չունեցավ ընթացքի վրա: • Թիմի որոշ անդամներ մյուսներին արտահայտվելու հնարավորություն չտվեցին: • Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին միմյանց, սակայն որոշ դեպքերում կապը հստակ չէր:	• Ելույթն անկազմակերպ էր, չկար հստակ դերաբաշխում: • Մեկ կամ մի քանի հոգի իրենց վրա վերցրին հիմնական պատասխանատվությունը: • Անհատական ելույթների միջև բացակայում էր տրամաբանական կապը:
Բովան-դակու-թյունը	• Փաստերը կամ օրինակները մանրամասն էին, ճշգրիտ և համապատասխան: • Տեսությունները, որոնց հղում էր արված, հստակ նկարագրված էին և համապատասխան ձևով օգտագործված: • Վերլուծությունները, քննարկումները և եզրակացությունները ճշգրտորեն կապված էին օրինակների, փաստերի և տեսությունների հետ:	• Փաստերն ու օրինակները հիմնականում մանրամասն էին, ճշգրիտ և համապատասխան, սակայն կային վրիպումներ: • Տեսություններին հղումներ արված էին, բայց դրանք կամ ոչ հստակ էին նկարագրված կամ անհամապատասխան ձևով օգտագործված: • Վերլուծությունների, քննարկումների և եզրակացությունների միջև կապը ակնհայտ չէր կամ ենթադրվում էր, սակայն ճշգրտորեն կապված չէին օրինակների, փաստերի և տեսությունների հետ:	• Փաստերում և օրինակներում բացակայում էր մանրամասնությունը, օրինակները անհամապատասխան էին և անհասկանալի: • Այն տեսությունները, որոնց հղումներ էր կատարված, նկարագրված էին ոչ հստակ և անհամապատասխանորեն էին օգտագործված, կամ դրանց ընդհանրապես հղում արված չէր: • Ոչ մի տրամաբանական կապ չկար վերլուծությունների, քննարկումների և օրինակների, փաստերի և տեսությունների միջև:

Կարող եք համապատասխան վանդակում կատարել նշում (☑)՝ ընդհանուր միավորը որոշելու, ինչպես նաև արդյունքները ուսանողներին ներկայացնելու նպատակով:

Հավելված 3
Գրավոր վեկույցների գնահատման ուղեցույցի օրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (70 %)

Բովանդակությունը հետազոտության արդյունքն է.

- Գրվածքը պետք է ունենա տրամաբանական կուռ կառուցվածք, էական ասելիք, ներկայացվի վերլուծաբար:
- Արտագրված և առանց հղումների կազմված աշխատանքները չեն գնահատվի:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ (15 %)

1 Աշխատանքը պետք ունենա.
- տիտղոսաթերթ,
- բովանդակության ցանկ,
- գրականության ցանկ:

2 Աշխատանքը պետք է գրված լինի Arial Armenian տառատեսակով և 12 տառաչափով:
3 Ընդունելի է APA հղումների կատարման միջազգային չափանիշը:
4 Աշխատանքն անհրաժեշտ է էջակալել:

ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (15 %)

Բովանդակալից աշխատանքի լեզուն պետք է լինի հարթ և գեղեցիկ՝ վերծ որձական սխալներից:

Պետք է ուշադրություն դարձնել.

- նախադասության և պարբերության կառուցմանը, խոսքի մասերի ճիշտ օգտագործմանը,
- շարահյուսությանը,
- բառերի ընտրությանը,
- կետադրությանը,
- տպագրական սխալներին,
- խոսքի կապակցվածությանը,
- ավելորդ, կողմնակի և անպիտան նյութերից, ինչպես նաև կրկնություններից վերծ լինելուն:

Հավելված 4.
Դասընթացի ծրագրի ձև

Դասընթացի անվանումը. Այստեղ գրե՛ք Ձեր դասընթացի անվանումը:

Դասընթացի նկարագրությունը, հիմնական նպատակները

Դասընթացի նկարագրությունը պետք է.

- *ունենա որոշակի կառուցվածք, լեզու,*
- *պարունակի դասընթացի բովանդակության և անցկացման մասին հստակ տեղեկություններ,*
- *լինի համառոտ՝ կազմված միջին հաշվով քառասուն բառից,*
- *տեղեկություն տա դասընթացին անհրաժեշտ օժանդակ միջոցների մասին (օրինակ՝ հաշվիչներ, համակարգիչներ)*

Հիշե՛ք՝ դասընթացի նկարագրությունը ուսանողին դեպի դասընթացը տանող ճանապարհի առաջին ուղենիշն է:

Դասընթացի նկարագրին ավելի մանրամասն տեղեկանալու, ինչպես նաև օրինակելի տարբերակներին ծանոթանալու նպատակով այցելե՛ք www.teaching.am կայքէջի «Ռեսուրս-կենտրոն» բաժինը:

Կիսամյակը	Տարին	Ժամաքանակը	Կրեդիտները	Դասախոսի էլեկտրոնային փոստի հասցեն
I կամ II	*ուս. տարի*	*Նշել լսարանային ժամաքանակը:*	*Նշել կրեդիտների թիվը:*	

Դասախոս

Նշել դասախոսի ազգանունը, անունը, գիտական աստիճանը, կոչումը:

Նախապայման առարկաները

Դասընթացի նախապայմանները այն դասընթացները, գիտելիքները կամ պահանջներն են, որոնք ուսանողները պետք է անցած և բավարարած լինեն մինչև տվյալ դասընթացը սկսելը:

Դասընթացի նախապայմանների կարևորությունը առկա է հատկապես հետևյալ դեպքերում.

- *Ուսանողների՝ այլ ֆակուլտետներից տեղափոխվելու և որոշ տարբերություններ հանձնելու դեպքում*
- *Բոլոնյան գործընթացի շրջանակներում ուսանողների մշտական շարժունակության և շարունակական կրթության պայմաններում,*

Ուսուցման մեթոդը

Այս բաժնում պետք է ներկայացված լինեն այն կոնկրետ մեթոդները, որոնք դասախոսը նախատեսում է կիրառել իր դասընթացի շրջանակներում: Անհրաժեշտ է, որ Ձեր կողմից ընտրվող ուսուցման մեթոդները ուղղված լինեն դասընթացի շրջանակներում առաջ քաշված նպատակին և դրա իրագործման ուղղությամբ խնդիրների լուծմանը:

Դասավանդման մեթոդների, դրանց առավելությունների ու թերություն-ների մասին մանրամասն տե՛ս սույն ձեռնարկի երրորդ գլխում, ինչպես նաև www.teaching.am կայքէջի «Ռեսուրս-կենտրոն» բաժնում:

Գնահատման մեթոդը

Գնահատման մեթոդների բաժինը պետք է ներկայացնի, թե ինչ սկզբունքով է դասախոսը նախատեսում իրականացնել գնահատումը: Նա պետք է կառուցի իր գնահատման համակարգը՝ ելնելով մի կողմից իր դասընթացի տրամաբա-նությունից, մյուս կողմից՝ որպես սահմանափակում ընդունելով իր բուհի գնա-հատման ընդհանուր քաղաքականության սկզբունքները:

Ավելի մանրամասն տե՛ս սույն ձեռնարկի չորրորդ գլխում, ինչպես նաև www.teaching.am կայքէջի «Ռեսուրս-կենտրոն» բաժնում:

Ակադեմիա-կան կարգա-պահու-թյուն և գրա-գողություն

Գրագողությունը ուրիշի տպագրված կամ չտպագրված մտքերի կիրառումն է՝ առանց դրանց աղբյուրը նշելու կամ աղբյուրին հղում կատարելու: Արտագրությունները և ուրիշների մտքերը որպես իրենցը ներկայացնելը համարվում է ուսումնական անարդարություն և անազնվություն:

Նման երևույթները բացառելու նպատակով ցանկալի է դասընթացի ծրագրում նշել այդ խախտումների դեպքում պատժամիջոցների կիրառման մասին՝ գնահատականի իջեցում, քննությանը չթույլատրելու որոշում, անբավարար գնա-հատական կամ այլ միջոցներ, որոնք նպատակահարմար է գտնում դասախոսը, կամ սահմանված են բուհի կարգով (այս պարագայում դասախոսը կարող է ուղղակի հղում կատարել բուհի համապատասխան կարգին):

Ուրիշների մտավոր ունեցվածքի հանդեպ հարգանքը պետք է ուսանողի մեջ սերմանել և վարգացնել բուհում ուսումնառելու առաջին իսկ օրերից: Դասընթացի ծրագրի այս բաժնում անհրաժեշտ է ուսանողներին սովորեցնել, թե ինչպես կարող են օգտվել ուրիշների մտքերից, կատարել հղումներ, օգտվել գիտության մեջ կատարված հայտնագործություններից՝ նշելով հայտնագործողի անունը, մեջբերել աղյուսակներ և ծրագրեր՝ նշելով կազմողներին, արժեքավոր միտքը արտահայտել սեփական բառերով՝ դարձյալ նշելով հեղինակի անունը:

Հղումների ընդհանուր կանոններին կարելի է ծանոթանալ www.teaching.am կայքէջի «Ռեսուրս-կենտրոն» բաժնում:

Լսարանային կանոններ

Առարկայական ծրագրում նպատակահարմար է ներկայացնել ընդհանուր լսարանային կանոններ՝ որպես առանձին բաժին: Լսարանային կանոններին է պատկանում այն իրավունքների և պարտականությունների շարքը, որը սահմանում է դասախոսը տվյալ դասաժամի համար: Երբեմն բուհերը իրենց հերթին սահմանում են ընդհանուր տիպի ներքին կարգուկանոն: Այս դեպքում դասախոսի կողմից սահմանվող լսարանային կանոնները պետք է տեղավորվեն այդ ընդհանուր կանոնների տրամաբանական կառուցվածքի մեջ:

Օրինակ՝ *բուհը սահմանում է ներքին կանոն, ըստ որի լսարանում ուսանողների հաշվառումը անհրաժեշտ է կատարել դասի սկզբից 15 րոպե անց: Դասախոսը իր հերթին կարող է սահմանել լսարանային կանոն, ըստ որի դասի սկզբից տասնհինգ րոպեի ընթացքում ուսանողները կարող են ուշացած մտնել լսարան և առանց թույլտվություն հարցնելու տեղավորվել, սակայն տասնհինգ րոպե անց նրանք իրավունք չունեն լսարան մտնելու և կստանան բացակա: Այս դեպքում դասախոսի սահմանած կանոնը լիովին համընկնում է բուհի ներքին կանոնակարգի տրամաբանությանը:*

Բացակա-յությունների թույլատրելի քանակը

Դասախոսը կարող է սահմանել բացակայությունների թույլատրելի քանակը ողջ ուսումնական տարվա համար: Այն երբեմն կարող է որոշակի կշիռ ունենալ գնահատման ընդհանուր համախմբում:

Որոշ դեպքերում այս սահմանները և նրանց հնարավոր հետևանքները ամրա-գրվում են բուհի ներքին կանոնակարգում:

Հանձնարարվող նյութեր	
Պարտադիր գրականության ցանկ	
Ոչ պարտադիր գրականության ցանկ	
Ինտերնետային կայքեր	

Թեմա	Խնդիրները, կրթական ելքային արդյունքները	Ինքնուրույն աշխատանք, տնային աշխատանք	Լսարանային աշխատանք	Ամիս, ամսաթիվ
	Տե՛ս սույն ձեռնարկի երկրորդ գլուխը և ***www.teaching.am*** *կայքէջի «Ռեսուրս-կենտրոն» բաժինը:*			

Դասընթացի ծրագրի հայերեն տարբերակները ներկայացված են teaching.am կայքում, որտեղ կարող եք.

- *ուսումնասիրել այլ դասավանդողների փորձը, թողնել հետադարձ կապ՝ ուղղված ծրագրի կատարելագործմանը,*
- *տեղադրել Ձեր ծրագիրը և խորհուրդներ ստանալ տարբեր ոլորտների շահառուների կողմից:*

«

Միջակ դասավանդողն ասում է:

Լավ դասավանդողը բացատրում է:

Գերազանց դասավանդողը ցուցադրում է:

Բացառիկ դասավանդողը ՈԳԵՇՆՉՈՒՄ է:

Ուիլիամ Արթուր Ուարդ

Օգտագործված գրականություն

Գրքեր

Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ. (2010). Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցումևիրականացում.-Մեթոդականուղեցույց-Բարձրագույնկրթությանռազմավարականհետազոտությունների ազգային կենտրոն. Երևան: Թասկ ՍՊԸ:

Bartz, David E., Laura K. Miller . (1991). 12 Teaching Methods To Enhance Student Learning . Washington, D.C.: NEA Professional Library, National Education Association.

Borich, G. D. (2000). Effective Teaching Methods. Upper Saddle River, N.J.: Merrill, 4th ed.

Diamond, R. M. (1998). Designing and Assessing Courses And Curricula: A Practical Guide. San Francisco: Jossey_Bass Publishers, Rev. ed., 2nd ed.

Fink, L. D. (2009). Designing Couurses For Significant Learning: Voices of Experience. San Francisco: Jossey-Bass.

Greer, R. D. (2002). Designing Teaching Strategies: An Applied Behavior Analysis Systems Approach. Amsterdam; San Diego, Calif: Academic Press.

Levi, Antonia and Dannelle D. Stevens (2004). Introduction to Rubrics: An Assessment Tool to Save Grading Time, Convey Effective Feedback, and Promote Student Learning. Herndon, VA: Stylus Publishing.

McNeil, J. (1996). Curriculum, a Comprehensive Introduction. Los Angeles: John Wiley և Sons.

Pamela, T. D., և James, S. H. (2005). Linking Teacher Evaluation and Student Learnin. Alexandria, Virginia: Association for Supervision and Curriculum Development.

Հոդվածներ

Beckett, J. (1997, Vol. 16, No.1, Special Issue: Serrano V. Priest: 25th Anniversary (Winter)). A Process Model for Designing Courses. Journal of Policy Analysis and Management, pp. 142-152.

Decker F. Walker, Jon Schaffarzick. (1974, Vol. 44, No. 1 (Winter)). Comparing Curricula. Review of Educational Research, pp. 83-111.

James J. Polczynski, L.E.Shirland. (1977, May-Jun., Vol. 70, No.5). Expectancy Theory and Contract Grading Combined as an Effective Motivational Force for College Students. The Journal of Educational Research, pp. 238-241.

John J. Denton. (1989, Nov., Vol. 63, No. 3). Selecting an Appropriate Grading System. The Clearing House, pp. 107-110.

John T. E. Richardson, James Hartley, Stephen Newstead, Jenny Mayes. (2005, Nov., Vol. 50, No. 4). Teachers' Beliefs and Intensions concerning Teaching in Higher Education. Higher Education, pp. 537-571.

Katherine Samuelowicz, John D. Bain. (2001, Apr., Vo.41, No.3). Revisiting Academics' Beliefs about Teaching and Learning. Higher Education, pp. 299-325.

Keith Trigwell, Paul Ashwin. (2006, Mar., Vol.54, No.2). An Exploratory Study of Situated Conceptions of Learning and Learning Environments. Higher Education, pp. 243-258.

Mark Wilson, Kathleen Scalise. (2006, Dec., Vol. 52, No. 4). Assessment to Improve Learning in Higher Education: The BEAR Assessment System. Higher Education, pp. 635-663.

Ruth Kane, Susan Sandretto, Chris Heath. (2004, Apr., Vol. 47, No. 3). An Investigation into Excellent Tertiary Teaching: Emphasising Reflective Practice. Higher Education, pp. 283-310.

Steward Eanson, Jane Martin, Jon Nixon, Penny McMeown. (1996, March, Vol. 44, No.1). Towards a Theory of Learning. British Journal of Educational Studies, pp. 9-26.

William E. Becker, Michael Watts. (2001, Summer, Vol. 32, No. 3). Teaching Methods in U.S. Undergraduate Economics Courses. The Journal of Economic Education, pp. 269-279.

Կայքէջեր

Pennsylvania College of Technology . (n.d.). Retrieved 2010, from
http://www.pct.edu/studentPolicy/acaddishonesty.htm

Connexions. (n.d.). Retrieved 2010, from http://cnx.org/:
http://cnx.org/content/m14872/latest/

(n.d.). Retrieved 2010, from
http://employees.oneonta.edu/thomasrl/YaTeachTech.pdf

(n.d.). Retrieved 2010, from
http://www.tla.ed.ac.uk/resources/course-org/Chapter8.pdf

(n.d.). Retrieved 2010, from
http://www.georgebrown.ca/pal/learning-styles.pdf

(n.d.). Retrieved 2010, from
http://www.ccghe.jhmi.edu/assets/CCGHE/Documents/S1-Teaching_Techniques.pdf

(n.d.). Retrieved 2010, from
http://www.lib.utexas.edu/services/instruction/tips/cp/cp_goals.html

(n.d.). Retrieved 2010, from
http://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC2384173/

(n.d.). Retrieved 2010, from **http://ezinearticles.com/?Professors---Design-an-Effective-Course-Syllabus---Determine-Your-Goals-and-Objectives-First&id=1693372**

(n.d.). Retrieved 2010, from **http://www.bioassess.edu.au/principles**

(n.d.). Retrieved 2010, from 5. **http://www.flinders.edu.au/teaching/teaching-strategies/assessment/aims-learning-outcomes.cfm**

(n.d.). Retrieved 2010, from www.projectsmart.co.uk/smart-goals.html
Atherton, J. (2003). Learning and Teaching Bloom's Taxonomy . Retrieved 2010, from
http://www.learningandteaching.info/learning/bloomtax.htm

Barraket, J. (n.d.). Retrieved 2010, from
http://jutlp.uow.edu.au/2005_v02_i02/pdf/barraket_004.pdf